

որոշ եւ հաստատուն դադարի մըն էր, անկէ յայտնի է որ արդէն նոյն ատեն իսկ՝ լեզուաւ, կրօնքով ու սովորութիւններով դարգացած էր համայնի հայութիւն մը, որ քանի մը նահանգներուն ամբողջ դանդաղութիւնը կամ բնակչութեան մեծամասնութիւնը կը կազմէր, իսկ ինչ ինչ նահանգներու մէջ ալ՝ դէժ տիրող դասակարգը. այս հայութիւնը այն հաստատուն կայն էր՝ որ պէտքէն ազդերն ամբողջութեան մը միացուցած էր՝ երկրին ի բնէ ու պատմական յարաբերութեանց բերմամբը դժուած սահմաններուն մէջ: Իսկ երբ Ստրաբոն կ'ըսէ թէ Արտաշէսի եւ Չարիադրիսի ձեռք ընդարձակուած Հայաստանի մէջ բնակիչները (Ստրաբոնի ատեն, ինչպէս պէտք ենք ընդունիլ) ամէնքն ալ համալեզու էին (C. 528 «մինչեւ ամենեցուն համալեզու լինել»), այս խօսքը դասական իմաստով առնելու է, այլ այնպէս մը պէտք ենք հասկընալ, որ հայ լեզուն թէեւ ամբողջ Հայաստանի մէջ կը հասկըցուէր տիրող ազդին լեզուն ըլլալուն, բայց միայն Հայաստանի հին նահանգներուն մէջ ընդհանուր կը խօսուէր» են:

Թողունք լեզուի եւ հայացման խնդիրը: Գնացեալ լիովին կը բացատրէ արդի բնասիրութեան հայեացքը: Եւ արդէն Հին Հայաստանի դադարի երբեք այլազգէ չէ ըմբռնուած՝ նոյն իսկ իրաց բնական ստիպմամբ: Այսպէս — Եփրատեան Սահմանադժով են — նկարագրած է նոյնը Հայաստանի մասին առաջին կարեւոր գործոյ Հեղինակը՝ Հ. Ղ. Ինքիմեան («Ստորագրութիւն Հին Հայաստանեայց», Վենետ. 1822, էջ 553). որչափ ալ՝ իւր ժամանակին համար ըմբռնելի՝ տարբեր կարծիք ունենար Խորենացույ զրուցաց եւ նմանաց մասին (հմտ. նաեւ իւր ոչ նուազ գործը՝ «Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի», Վենետ. 1835, Հատ. Ա.—Գ): Այսպէս՝ նորագոյն լուսազոյն երկն այս մասին՝ Հ. Հիւրշմանի յաճախ յիշուած գործը («Հին Հայոց Տեղւոյ անունները» Հայոց աշխարհին պատմական տեղագրութեան մասին ուսումնասիրութիւններով, թրգմ. Հ. Բ. Պիլէզիկեան, Վիեննա 1907, էջ ԺԶ + 443) — յիշելու համար միայն գասունք: Այսպէս — յիշելու համար հատ մ'ալ նորագոյն աշխարհագրութեան համար անգամ — Հ. Ղ. Ալիշան, «Տեղագրի Հայոց Մեծաց» (Վիենետ. 1855): Կը թողունք յիշել ուրիշ երկերը:

Հետեւութիւնը շատ սրտէ է: Բնասիրութիւնը Հայաստանի սահմաններու մէջ չառնուել ստիպուած է նոյն իսկ սահմանակից «Փոքր-Հայքը», միւս նման դրից մէջ՝ աւելի կամ նուազ իրեն նման հայ ցեղին հետ ազերս մ'ունեցող միւս սահմանակիցները (ինչպէս անոր կից Խաղտիքը, վարը Ուոհայաստան, Միւղդոնիա եւն): — Իսկ Կողոփեմէի (առանձինն՝ Սեբաստիայ) մասին «Հին Հայաստանի սահմաններու» եւ ոչ կրնամք խօսիլ ընել, ինչ ալ ըլլան ասոր եւ «Փոքր-Հայոց» ազերսները: Այս մասին որեւէ խնդիր չի կրնար ըլլալ:

(Շարունակելի):



ՔՆՆՈՒԹԻՆՆ ՏԵՍԼԵՆՍ Ս. ՍԵՀՈՎԵՅ

Գ. ԿԱՐԾԻՌՆԵՐ ՏԵՍԼԵՆՍ ՇՈՒՐՁԸ

23. Տեսանք վերագոյն (§ 16), թէ Տեսիլքիս վաւերականութեան մասին կասկած յայտնած էր արդէն Ներսէս Լամբրոնացի. «զոյս ասեմք, թէ Տեսիլն այն ոչ հաւաստի առ մեզ՝ գոյ սրբոյն Սահակայ, այլ ի կարծիս մնայ»: Պատճառարանութիւնը, զոր յառաջ կը բերէր Լամբրոնացի, յատկապէս այն, թէ Մովսէս Խորենացի անոր մասին յիշատակութիւն չէ ըրած, հիմնաւոր էր. վասն զի Մ. Խորենացի ոչ միայն Տեսիլքը ճանչցած է, այլ եւ կարգացած է անոր Յառաջարանը, այնպէս ինչպէս ներկայացուած է այն Ղ. Փարպեցույ վերագրուած Ա. Գրուագին մէջ:

24. Միւրտիչ Իմին¹² կը համարէ թէ Տեսիլքը այն ձեւին մէջ, ինչպէս աւանդուած է, կեղծիք մըն է, յետ ժամանակաց մուծուած Ղ. Փարպեցույ Պատմութեան մէջ. «Լեզուն, կը գրէ Իմին, բոլորովին տարբեր է Ղազարի լեզուէն»: Ինքն ալ կը ձայնակցի Ներսէս Լամբրոնացույ, երբ կը հաւաստէ թէ Մ. Խորենացի անձանօթ է Տեսիլքիս: Ն. Լամբրոնացի, որ կը կասկածէր Տեսիլքիս վաւերականութեան մասին, հաւանօրէն չէր դատած գոյն Ղ. Փարպեցույ Պատմութեան մէջ:

Մ. Իմին կ'երեւայ թէ ուշադրութեամբ չէ կարգացած Մ. Խորենացույ վերագոյն յա-

¹² О видѣніи святаго Саака (տե՛ս § 5):

ռաջ բերուած (§ 10) հատուածը: Մ. Խորենացի աչքի առաջ ունեցած էր Ղ. Փարպեցույ Ա. Գրութիւնը, ուր կար Տեսիլքս իւր Յառաջարանով. ուստի եւ Ն. Լամբրոնացի, եթէ ունէր ձեռքի տակ Ղ. Փարպեցույ մատենը, կարգացած պիտի ըլլար հոն Տեսիլքս ալ:

25. Գրիգոր Խալաթեանց¹³ իւրացնելով իւր ուսուցչին՝ Մ. Իմինի տեսութիւնը կը փորձէ նոր պատճառարանութիւններով ամբողջել զայն. «Եթէ ոճ եւ լեզու Տեսեանն եւ Եթէ այլ պարագայք ինչ նորին այնպէս կասկածելի առնեն զգրութիւնը, մինչ հաղիւ իմն մարթ իցէ Ղազարայ զայն համարել գործ: ... Տեսիլն Ս. Սահակայ առ ժամանակաւ գիտնական եպիսկոպոսիս (Ներսիսի Լամբրոնացույ) շրջէր ի միջի ժողովրդեան իրբեւ առանձին իմն աւանդութիւն եւ տակաւին ոչ անցեալ ի շարս մատենին Փարպեցույ: Թուի, թէ յետ ժամանակի ի վերայ համառօտ բանից Փարպեցույ յարմարեալ իցէ մանրապատումն այն Տեսիլ՝ իրբեւ գրաւոր իմն աւանդութիւն...: Կարծիքս մասամբ իւրեք հաստատի այնու, զի պատմագիրք ոմանք՝ ծաղկեալք զինի Ն. դարու՝ մինչեւ ցորոշ իմն ժամանակ (ցԺ. դար) ոչ յիշեն ինչ զգրաւոր Տեսիլն Ս. Սահակայ հանդոյն այնմիկ, որ աւանդի ի Պատմութեան Ղազարու» (124): Առաջին անգամ ի մերոց Թովմաս Արծրունի եւ օտարներէն՝ Կոստանդին Ծիրանածին կը յիշեն Տեսիլքը ըստ այժմեան բովանդակութեան (124—126): Ասկէ «մարթ է ընթացողը, կը գրէ Խալաթեան, թէ գրաւորն այն Տեսիլ թերեւս ի Ժ. իցէ յօրինեալ դարու եւ ի կարգ Ղազարայ Պատմութեան յարմարեալ, թէեւ իրբեւ անգիր աւանդութիւն գուցէ ընդ երկար շրջէր ի մէջ ժողովրդեան» (126): Ինչպէս, կ'ըսէ Խալաթեանց, Փաւստոսի համառօտ տողերէն ծաղեցաւ «մանրամասնեայ գուշակութիւնն Ս. Ներսիսի ձեռամբ Մեսրոպ երիցու Ժ. դարուն», «Թուի մեզ, եթէ ըստ այնմ օրինակի ընծայեցաւ ի ըյս եւ մերս այս երկարապատում «Տեսիլ Սահակայ, յառաջացեալ ի հակիրճ բանից Խորենացույ եւ Ղազարայ. այլ թէ որո՞յ ձեռամբ՝ գործ է գտանել» (130): Տեսեան հեղինակը ծանօթ է Գրիգորի Տեսեան, որմէ փոխառութիւններ ալ ունի (127—128, ծան. 2):

¹³ Ղ. Փարպեցի եւ գործք նորին (տե՛ս § 5), էջ 120—130:

26. Մ. Գարգաշեան¹⁴ կը գրէ. Սահակայ Տեսիլն «նմանութիւն է Տեսեան Լուսաւորչին, ե՛ւ արուեստիւ ե՛ւ լեզուաւ խոնարհազոյն քան զնա: Նպատակն է՝ Վարդանանց ժամանակին պատմութիւնն, ուխտապահաց եւ ուրացելոց (զորս յայտնի իսկ կ'անհարկէ ուրեք), ցուցնել մարգարէական սղով կանխաւ յայտնուած առ Սահակ՝ իբր նախախնամութեան խորհրդով սահմանուած: Այս տեսութիւնէն յայտնի է, թէ գրողն էր յետոյ քան զպատերազմն Վարդանանց, ի միջոցի երեսնամեայ ժամանակիս 452—482: ... Փարպեցին... կը յաւելու եւս թէ Սահակ զրեց զայն երկնաւոր հրամանաւ, թէպէտ լեզուն չէ Սահակայ...: Աւելորդ է ասել, թէ Տեսիլս այս... ոչ այլ ինչ է, եթէ ոչ կեղծիք բարեպաշտ քրիստոնէի, այն դարուն ճաշակին յարմար՝ հողեւոր, շատ անգամ ցուրտ սոյաբանութիւններով լի...: Գիտել արժան է սակայն, թէ բարեպաշտ հեղինակն, ո՛ր ոք եւ է, համբակ էր իւր արուեստին. քանզի կուտայ գուշակել առ Սահակ իբր յայտնութեամբ թէ Լուսաւորչայ ցեղէն պիտի նստէին ժամանակ մը կաթողիկոս ընտիր անձինք, որոց պիտի յաջորդէին յետոյ անարժան մարդիկ. բայց այս եղաւ յառաջ քան զՍահակ, մինչ Տեսիլք, որ է մարգարէութիւն՝ ապագային համար է եւ ոչ անցելոյն. նա մանաւանդ այն յայտնութեան մէջ իբր ապագայ ցուցուած անձանց մին է նոյն-ինքն Սահակ»:

27. Հ. Յովսէփ Գաթրճեան իւր Սրբազան Պատարագամատոյցը Հայոց» աշխատութեան մէջ¹⁵ այլ եւ այլ առթիւ անդրադարձած է Տեսիլքիս. կարեւոր կը համարիմ հոս ամփոփել իր տեսութիւնը Տեսիլքիս շուրջը, որ վրիպած է ցայսօր շատերու ուշադրութիւնէն. «Տեսիլ սրբոյն Սահակայ» գրուածքը «Ղ. Փարպեցի՝ Կաթողիկէին Վարդարշապատու երէցը՝ Ն. դարուն վերջերը մեզի՝ անանկ ինչպէս որ կը գտնէ, կու տայ: Մեզի... Սահակայ Տեսեան ստուգիւ եղած ըլլալը կամ չըլլալը հող չէ. բաւական է որ ան ատեն եւ ոչ ետքը մէկն այսպէս խորհեցաւ եւ գրեց եւ ան դադարաւորներն ունեցաւ»: «Լեզուն Ն. դարուն շատ վերջերը չ'իյնար»:

«Հրեշտակ մը տեսնուածին մեկնութիւնը կու տայ. այս մեկնութեան գլուխն ալ սանկ

¹⁴ Մ. Գարգաշեան, Գնական Պատմութիւն Հայոց, Գ., 9—10:

¹⁵ Հ. Յ. Գաթրճեան, Սրբազան Պատարագամատոյցը Հայոց, Վիեննա 1897, էջ 727—728:

զրուած է. «Մեկնութիւն տեսեան սրբոյն Սահակայ ի հրեշտակէն Աստուծոյ, զոր եցոյց յայտնի ըստ իւրաքանչիւր գլխոց եւ միոյմիոյ տանց, վասն կենաց մարդկան եւ կատարածի աշխարհի: Արդ գրեցաք զՏեսիլն կարմրադեղօք, եւ զՍեկնութիւնն՝ սեւադեղօք»¹⁶: Չէ թէ իրմէ, այլ Տեսիլը տեսնողէն զրուած է՝ կ'ըսէ Ղազար: Առաջին մասին աւելորդ է մեզի իւր վկայութիւնը. վասն զի արդէն լեզուն Ղազարայ չէ, իւր ժամանակէն մաքրագոյն եւ հնագոյն ըլլալով. խնդիրն երկրորդ մասին վրայ է: Սահակ, որն որ աւ Տեսիլը տեսեր այսպէս՝ գրով ալ թողուցեր է, կ'ըսէ Ղազար, ինչպէս նոյն իսկ տեսեան խօսքերն ալ կը պահանջեն: Կրնա՞յ պարթեւ հայրապետը Տեսիլը մը տեսած ըլլալ կամ ոչ, նոյնը պատմած ըլլալ կամ ոչ՝ երբ որ կ'ուզէին նախարարը որ իրեն կաթողիկոսական իշխանութիւնը նաեւ պարսկական Դրան կողմանէ հաստատել տան: Սակայն դժուարաւ կրնանք համոզուիլ թէ ասիկայ այնպիսի տեսեան մը վաւերական գրութիւնն ըլլայ: «Գրիգորի գրոց» (Ազաթանդեղեայ) մէջ գտնուած Տեսեան հետ ասիկայ զոյգ մը կը կազմէ, բազմօք անկէ ասոր առնուած ձեւ, դադարաւոր, խօսք եւ բառ...: Բարեբախտութեամբ միւնակ ներքուստ (լեզուէն եւն) չէ որ աւ հնութիւնն իրեն կ'ընծայուի: Չունինք ամենեւին տարակոյս որ ասիկայ այսպէս առջեւն ունէր նաեւ Մ. Խորենացի եւ նոյնէն հանելով կը նշանակէր վերոյիշեալ դէպքը: Վասն զի մեր Տեսիլը, ինչպէս որ Ղազար յառաջ կը բերէ, յառաջ եւ վերջը պատմութիւն կամ տեղեկութիւն մ'ունի երրորդէ մը զրուած, որուն կը հետեւին թէ՛ Ղազար եւ թէ՛ ձերուսի Բազրեանդայ եպիսկոպոսը¹⁷: Այս ժամանակներէն քիչ յառաջ կրնայ ըլլալ այն անանուն կանոնաց Հաւաքողը, որն որ Շահապիվանու ժողովոյն կանոններուն գլուխը յառաջարկ մը յորինելով կը յիշէ աս Տեսիլը, անոր մէջ ակնարկութիւններ գտնելով՝ իբր գրուութիւն կարգի եւ կանոնի խանգար-

¹⁶ «Այս նորագոյն նշանակուածները, որոնք Փարպեցւոյ 1793ի տարւոյ տպագրութեան մէջ չկան, Հռոմայ Museo Borgianoի ընտիր ընթերցուած ունեցող օրինակէն են եւ հարազատութեան ամէն նշան ունին: Այսպէս ուրեմն գոյներով զատեր է ի սկզբան աս տեղիքը շինողը: Ընդօրինակողը չպահելով աս գունոց գանձագանութիւնը, հարկ համարուել է վերջապէս տպագրութիւնը, ձեզի անծանօթ պատճառով, բոլորովին զանց կ'ընէ աս վերնագիրները, թէպէտ ասոր անտարակոյս նախնական են»: Մ. Գ. 66:

ման, որուն դարման տանելու կը ժողովին Շահապիվանու Հարք (Իբր 447ին), միեւնոյն ատեն յայտնելով աս Հաւաքիչը՝ թէ ինքը բաւական հեռու է այս ժողովոյն ատենէն, Վարդանայ Մամիկոնեանց եւ անոր աղբատուսին նահատակութիւնները զիտէ, ուստի իբր 470—480ին (Վահանայ Մամիկոնեանի ատեններն) կը յորինէ իւր Հաւաքումն՝ որն որ Մանդակունոյն ալ անծանօթ չէ, ինչպէս ուրիշ տեղ մ'առիթ կ'ունենանք ցուցնելու: — Մեր Տեսեան յորինողը, հրեշտակին բերանը դրած խօսքերով, բաւական ճիշդ իբր բարեպաշտական նպատակ ունեցող աշխատութեան ժամանակը կը ցուցնէ, այսինքն 451էն՝ Վարդանայ մահուանէն, Վասակայ դրժմանէն եւ ուխտապահ նախարարաց կապանքէն ետքը. ուստի իբր 460ին, դուրսէ քանի մը տարի ալ ետքը յարմարցուած գրութիւն մըն է հիմա ձեռքերնիս»¹⁸:

28. Հ. Կ. Տէր-Սահակեան¹⁹ նկատի առնելով Տեսեան հետեւեալ տեղիքը «Յայտհատէ մինչեւ ի վախճան աշխարհիս՝ երեք տասներեակք ամաց եւ կէս տասներեակի համառօտեցի ի վերայ ամենայն աշխարհի, մինչեւ յերեւումն պղծոյն անապատի» եւ «Եւ լինին սոքա յայտնապէս թուով ամք երեք հարիւր յիսուն», կը զուգակշռէ զայն Կոստանդին Ծիրանածնի խօսքերուն հետ. «Այն ժամանակ (Վասիլի թագաւորած ժամանակ) ի գլուխ ելաւ դուշակութիւնն եւ մարգարէութիւնը՝ զոր 350 տարի առաջ տեսած էր Իսահակ, ամէնէն կանխատես մարդը՝ ի մէջ երկցանց եւ կրօնաւորաց, որ եւ ինքն իսկ Արշակունեաց տոհմէն կը սիրէր. տեսիլքով իմացաւ, թէ այսչափ տարի անցնելէ վերջ՝ Արշակայ սերունդէն մէկը հոռովմէական տէրութեան մականը պիտի կրէ». եւ կը հետեցնէ. «Թէ Կոստանդին Ղ. Փարպեցիէն զիտէ զայս: Բ. Ղ. Փարպեցւոյ Պատմութիւնն, գէթ Տեսիլը թարգմանուած էր յունարէն (31—32): Գ. «Ս. Սահակ կ'ապրէր Ե. դարու մէջ, երեք դար ու կէս աւելցնենք ասոր վրայ, զի «ՅՄ տարի» կ'ըսէ Ղազար Փարպեցի, — պիտի հասնինք Թ. դարու կէսը, որ է ըսել

¹⁸ Այլուր կը գրէ Գաթրեան. «460—470ին շինուած է Սահակայ Տեսիլն». Սրբազան Պատարագամտոյցը, էջ 306—307, ծան. 5:
¹⁹ Հ. Կ. Տէր-Սահակեան, Փոտ եւ Սահակայ Տեսիլը. Բաղմավէպ 1905, էջ 28—32, 134—140: Նոյն մտքերը արտայայտուած են նաեւ G. Der Sahaghian, Un document armenien de la genealogie de Basile Ier. Byzantinische Zeitschrift, 20 (1911), 165—176.

850ին. այս թուականին էր որ պիտի երեւնար նախադուշակեալ կայսրը»:

«Եւ յիւրաւի 867ին դաւ կ'ըլլէր Վասիլ Արշակունի: — Թուականի փոքր տարբերութիւնը ի հարկէ նկատի չառնուիր...» (134):

Տէր-Սահակեանի եղբակացուցութիւններն են. «Ս. Տեսիլքիս հեղինակն է Փոտ, որ գրած է զայն 886—891 տարիներուն Հայոց Գորգոն վանքին մէջ: Բ. Տեսիլքին մէջ ակնարկուած արշակունի թագաւորն է Վասիլ Ա. կայսրը: Ինձ կը թուի թէ Տէր-Սահակեան իւր հաշուին մէջ հարիւրաւորով մը սխալած է, երբ Տեսիլքին 350ը անծանօթ թուականով գումարելով կը հասնի 886 տարւոյ: Ս. Սահակ իւր Տեսիլը կ'ընդունէր առ անագան 400ին. արդ գումարելով 400 + 350 կը ստանանք 750, թուական մը, որ հեռու է Վասիլ Ա. ի դահակալութենէն ոչ «փոքր», ինչպէս կ'ըսուի, այլ մեծ, 117 տարւոյ անջրպետով: Բնականաբար այսպիսի խախուտ հիմքի վրայ կառուցուած ամէն շէնք կը կորսնցնէ իւր հաստատութիւնը: Անհրաժեշտ հարկ չկայ ենթադրելու, թէ Սահակայ Տեսիլքը ծանօթ էր Կոստ. Ծիրանածնի յունարէն թարգմանութեամբ. Կոստանդին ունէր իրեն խորհրդակից հայեր, որոնք կրնային հաղորդած ըլլալ իրեն նաեւ Տեսիլքիս գոյութիւնը:

29. Հ. Գրիգոր Սարգիսեան²⁰ մանրակրկիտ քննելով հայ մատենագրութիւնը կը հասնի այն եզրակացութեան թէ Ե.—Թ. դարու հայ մատենագիրներուն անծանօթ է Տեսիլք: Ղ. Փարպեցւոյ Պատմութեան մէջ յիտասմուտ է այն: Մ. Խորենացի կարգացած չէ զայն. ակնարկութիւնն Տեսեան մասին ուրիշ ձեռքէ է. նոյնպէս Թովմաս Արծրունւոյ Պատմութեան մէջ: Իր «Կարծիքն» է. «Տեսիլքը հնարելու մէջ՝ ես երեք շրջան, երեք ձեռք, երեք խմբագրութիւն կը նկատեմ: Մին՝ անոր կ'մտնէր, կորիզը, կամ լաւ եւս՝ հիմը դրած է. միւսը՝ վրան նոր դադար մ'աւելցուցեր է, իսկ երրորդը՝ այժմեան կերպարանքն է տուած անոր: Առաջինը՝ Փարպեցիէն շատ ուշ է, Ե. դարուն կար: Երկրորդը՝ Ը. դարուն է. Երրորդը՝ Թ. դարուն: Առաջին խմբագիրը՝ Գրիգոր Սարգիսեանը կ'ըսէ (654—660). Երկրորդը՝ կրօնաւոր մը (742). Երրորդը՝ Փոտ:

«Առաջին խմբագիրը... Ներսէսի ա-

²⁰ Հ. Գ. Սարգիսեան, Տեսիլ Ս. Սահակայ Պարպեցի. Բաղմավէպ, 1931, էջ 529—532 եւ 1932, էջ 12—16:

նէծքը, Սահակայ անգաւակ, դահագուրկ եւ վշտացած դիրքի մէջ մահը դիտելով... Իբր ազգային մարգարէութիւն մը, Տեսիլքի մը մէջ խտացուց՝ ու Սահակայ սրբազան անուամբն հրատարակեց: Այսպէս ահա ծնունդ առաւ Տեսեան նախնական եւ համառօտ ձեւը, ինչպէս կը գտնենք զայն յոյն թարգմանութեան մէջ՝ որմէ անցած է նաեւ Մովսէս Խորենացւոյն պատմութեան:

Երկրորդ մարգարէին կամ խմբագրին երեւակայութիւնը, ինչպէս Ղեւոնդ մեզի բացատրեց՝ Բագրեւանդայ կուրը տաքցուցեր է: Աս ալ յաւակնեցաւ յախուռն տեսիլքով մը Հայ ազգին նորոգուելիք թագաւորութիւն մը քարոզել, որ յետոյ նախորդին հետ բարդուելով՝ նոր դադար մ'աւելցուց անոր վրայ:

Երրորդ խմբագրութիւնը... նախորդներուն յղացած դադարները միացուց՝ ու նոր մ'ալ անոնց վրայ աւելցուց. հայրապետական դաւադանին վերընծիւղելը: ... Նախորդման հմտութեամբ կը ճշդէ ժամանակը, եւ վստահ գուշակութեամբ կը ստուգէ նորոգուելիք (Արշակունի) թագաւորութիւնն ու հայրապետական (Պահլաւ) դահը: ... Ո՞վ կրնար այդպիսի յանդուրձան քայլ առնել եւ յաջողութեամբ գլուխ հանել: Մի միայն Փոտ: ... Արշակունի էր թագաւորը [Վասիլ Ա.], Պահլաւախան արշակունի նաեւ Ստեփան հայրապետը՝ արքայորդին: ... Ժամանակն որոշելու մէջ ալ շատ արթուն է նա. այդ ամէն բան պիտի կատարուի՝ «Մերձ յերեւումն պղծոյն անապատի», այսինքն՝ Ս. Սահակէն 350 տարի վերջ. արդ 350 + 500 = 850, ճիշդ (!) Վասիլ կայսրութեան ժամանակ: ...

«Տեսիլքին հայերէն վերջնական խմբագրութիւնը Թ.—ԹԱ. դարուն կը համարիմ, քանի որ մինչեւ այդ ժամանակ մեր մատենագրաց ծանօթ չէ եղած, ինչպէս վերեւ ցոյց տուի»:

Սահակի Տեսիլքի այս «հնարագէտ» առեղծմը բազմօք կը գլխէ Փոտի «հնարապետութիւնը»: Diegesis գրութեան հեղինակը կ'ենթադրէր Սահակի Տեսիլը. Հ. Սարգիսեան այդ հեղինակը կը ներկայացնէ Տեսիլքին առաջին խմբագիրը, «Գրիգոր սարգիսեանը» անուամբ: Ղեւոնդ երէց կը յիշէ, թէ 772ին (ո՛չ 742ին) «Տեսիլս սուտս պատմէր» Մոնոզոն մը, յուսադրելով, թէ «ընդ հուպ դարձցի դաւադան թագաւորութեանն միւսանգամ ի տուն Թորգոմայ»: Եւ

այս Մանուկը կ'ըլլայ Սահակայ Տեսլան երկրորդ խմբագրերը: Բայց Ղևոնդի ըսածն է, թէ Մանուկը իր տեսած տեսիլները կը պատմէր եւ ոչ յանուն Սահակայ կը խօսէր: Ծառաւոր կարելի էր ասկէ հետեւցնել, թէ Մանուկը ծանօթ Սահակի Տեսիլքին՝ ի մասին Արշակունեաց գահին խօսքերը կը մերձեցնէր իր ժամանակին: Ի մասին Փոտոյ կը գործէ նաեւ Սարգիսեան հաշուի այն սխալը, զոր Տէր-Սահակեան դորձած էր: Ս. Սահակ վահանած է 438ին. իսկ Տեսիլը տեսած էր եպիսկոպոսութենէն յառաջ, ուստի յամենայն դէպս 400էն յառաջ. ի՞նչ հիմամբ 350 տարիները բացատրելու համար երակէտ կ'ընարուի 500 թուականը «ճիշտ» 850° ըստանալու համար:

Ինձ կը թուի թէ ճախողած է Հ. Սարգիսեան իւր «կարծիքին» մէջ:

30. Ն. Աղոնց²¹ առթիւ իւր ուսումնասիրութեան նուիրած «Վասիլ Հայկազն»ին, կը գրէ. «Սահակի տեսիլի աղբյուրը Վասիլի թագաւորելուն աւելի քան խորհրդաւոր է: Ծառ կարելոր է բանասիրական տեսակէտից եւ պէտք ունի յատուկ ուսումնասիրութեան: Խնդիրը կնճռոտ է: Վասիլ դահ բարձրացաւ 866ին: Այստեղից 350 տարի յետ հաշուելով, կը ստանանք 516 թիւը, այն ինչ Սահակ պարում էր մի դար յառաջ»: Սահակ Տեսիլըս ունեցաւ 400ին. ուստի 350 տարին կը հանէ գմեղ 750ին: Այս դարուն մեր ուշագրութիւնը կը գրուէ Մանուկը, զոր կը յիշէ Ղևոնդ 772ին, իբրեւ արարական լուծէ ազատագրութեան քարոզիչ: «Հիմք կայ կարծելու որ այս առեւնները յորինուած լինի մեզ հետաքրքրող տեսիլը Ս. Սահակի անունով» (121):

«Վասիլի շրջապատում, գլխաւորապէս Փոտի ջանքերով, փորձել են տեսիլը յարմարեցնել Վասիլի դէպքին եւ նրանով հիմնաւորել նոր կայսրի Արշակունի ծագումը: ... Բերիչ խօսքով Փոտին վերագրուած դադանի գրութիւնը... այլ բան չէր եթէ ոչ Սահակի տեսիլը, որ յորինել էր գիտուն պատրիարքը ցոյց տալու համար, որ Վասիլը արքայական եւ այն՝ պարթեւական ծագում ունէր եւ արժանի էր իրեն վրձակուած մեծութեան: Այս կեղծիքը Փոտը կատարած պիտի լինէր 867—875 տարիներէ ընթացքում...: Այս պարագային 350 տարուան խնդիրը պէտք է լուծել

²¹ Հայրենիք, 1931, թ. 11, էջ 120—123:

թերեւս հետեւեալ հաշուով: Վասիլի ծննդաբանութեան մէջ Արշակունեաց անկումը եւ Արտաւանի եւ Կլիէնի փախուստը կատարուած է համարուում Լեւոն կայսեր (457—474) օրով: Վարդանանց պատերազմի կալանաւորները դարձը տեղի ունեցաւ Պերոզի Ե. տարին, որ է 462 թ. հաւանական է, որ յիշեալ Արշակունի իշխանների փախուստը նոր իւրատումների հետեւանքով վերաբերում է 462 թուին: Արդ այս թուից հաշուելով 350 տարին, կը գանք ճիշդ 812 թուականը, այսինքն՝ Վասիլի ծննդեան աւանդական տարին: ... Այս կերպով կարելի էր 350 թուի կնճիւրը փակուած հաշուել...» (121): Եւ որովհետեւ այս Լուծման կը հակասէ Diegesis գրուածքը, որ գրուած է Սահակ կաթողիկոսի (677—703) օրով, եւ կը յիշէ Տեսիլը, այս դժուարութիւնը լուծելու համար կը գրէ Աղոնց. «մենք աւելի հաւանական ենք համարում, որ երկու գրութիւններն էլ թարգմանուած լինէին յունարէնից Փոտի ժամանակ Երեւակեանի ժողովի առթիւ: Փոտի թուղթը Զաքարիա կաթողիկոսին գրուած է 875 թուին, այսինքն՝ նոյն տարին երբ Նիկիա ներքինին եկաւ Աշոտ իշխանի մօտ: ... Սահակի տեսիլը ծանօթ է նմանապէս Խորենացուն...: Եթէ տեսիլը Փոտի դորձ համարուի, յորինուած 867—875 տարիներին, պարզ է որ Խորենացու պատմութիւն չէ կարող այդ թուից կանուխ լինել: Սակայն, զուշանալու է հասցնել հաստատումներից: Տեսիլը բանասիրական կարեւորութիւն ունի եւ հարկ է որ նախապէս ուսումնասիրուի իր բոլոր մանրամասնութեամբ»:

31. Մաղաքիա արքեպ. Օրմանեան²² կը գրէ. «Տեսիլը բովանդակ կը դառնայ մերձուոր ժամանակներու [Ե. դարու] եղելութեանց վրայ...: Աւելի հեռու ժամանակներու կամ Երկրորդ Պահլաւանեաց վրայ ակնարկ մը չենք տեսներ այդ տեսիլքին մէջ: Ինչ որ ընդհանրապէս տեսիլքներու համար կ'ըսուի, ասոր համար ալ կրկնուած է, թէ եղելութեանց կատարուելէն ետքը յերկրուած են: Բայց այդ առթիւ, կամ պէտք էր փարպեցին մեղադրել, եւ կամ Սահակը առասպելարան մը համարիլ. եւ մենք փաստ մը չունինք ոչ մէկն ըսելու եւ ոչ միւսը հաստատելու»:

²² Ազգապատում, Ա., էջ 260—261:

32. Հ. Վարդան Հացունի կը գրէ²³ «Արդարեւ Հայոց արքունի նշաններէն մին եւս էր դունդը, յիշատակուած Ս. Սահակայ Տեսլան մէջ, որ դատելով իւր ընկած լեզուէն, հնարուած է միջին դարուն՝ հաւանօրէն Բագրատունեաց տէրութեան սկիզբը, երբ մեր թագաւորք Բիւզանդացի եւ արեւմտեան արքայից սովորութեամբ ոսկի գունդ մը կը կրէին ի ձեռին»:

Եւ այլուր²⁴ կը գրէ դարձեալ. «Ս. Սահակայ Տեսիլն կայ, որ հնարուած է Բագրատունեաց թագաւորութեան շրջանին. որովհետեւ կը գուշակէ Արշակունեաց դահուն կործանումն ու վերականգնումը, եւ նորագումը կաթողիկոսական աթոռին «ի շառաւիղէ սրբոյն Գրիգորի», որ են Պահլաւունիք. եւ Ժ. Գարուն արդէն կայ եւ ծանօթ է ժամանակի գրողաց²⁵: Արդ՝ ազոր մէջ կը յիշուի «գունդ մի ոսկի բոլոր», որ «նշանակէ զթագաւորութիւնն»: Բիւզանդական դունդն է՝ զոր տեսանք < էջ 168 >: Եւ եթէ Հայոց թագաւորութիւնն ալ կը յիշեցնէ անոնց, ապա այդ շրջանին ընտանի լինելու է նաեւ Հայոց, եւ յատկապէս դորձածուելու էր օժման առթիւ՝ բիւզանդական տարազին հետ, թէեւ կարգը կը լուէ»:

33. Այս բազմազան կարծիքներէն ոմանք չափաւոր են եւ ընդունելի ինչ ինչ մասերու մէջ, եւ ոմանք չափազանց եւ այս պատճառաւ ալ մերժելի:

Մերթեւի են Տէր-Սահակեանի, Սարգիսեանի, Աղոնցի եւ Հացունի տեսութիւններն եւ եղբակացութիւնները: Փոտ ոչ մի մասնակցութիւն չունի Տեսլանս հետ եւ չէր ալ կրնար ունենալ: Կոստանդին Միրանաձին եւ կամ այլ ժամանակակիցք կրնային բարեպաշտօրէն կամ քաղաքական ձգտումներով մերձեցնել Տեսիլքն Թ. դարու երկրորդ կէսի անցքերուն, ինչպէս Ժ. Գարուն մերձեցուցած էին Աղթամարցիք Աղթամարի աթոռին եւ Ժ. Գարուն էջմիածնեցիք՝ էջմիածնի աթոռին վերանորոգութեան: Տեսիլքը կը շրջէր հրապարակի վրայ սկսեալ Ը. դարէն. ապա իւրաքանչիւր ոք հասկնալ եւ մեկնել զայն եւ մերձեցնել անցեալին, ներկային եւ ապագային:

²³ Հին գրոշները պատմութեան մէջ. Բագրատիպ 1919, էջ 40:
²⁴ Պատմութիւն հին հայ տարազին. Վենետիկ 1923, էջ 187:
²⁵ Յու. Արծ. 353 [տե՛ս § 20]: Լամբր. Պատ. 26 [տե՛ս § 16]:

34. Մեր քննութեան հիմ կ'առնենք այն բնագիրը, որ աւանդուած է Ղ. Փարպեցույ վերագրուած Ա. Գրուազին մէջ: Այն յետամուտ տարր մը չէ հոն, այլ կը կազմէ Ա. Գրուազին էական մասը: Ասկէ ծագած են ձեռագիրներու մէջ տեսնուած օրինակները: Այս բնագրով ծանօթ եղած է Սահակայ Տեսիլքը Ը. եւ յաջորդ դարերու հեղինակներուն:

35. Ի մերձուտ նկատելով այս բնագիրը, կը նշմարեմ հոն հետքեր, որոնք կը գրգեն զիս ենթադրելու.

ա. Տեսիլքի հնագոյն բնագիր մը — Սկզբնագիրը:

բ. Ասկէ յառաջացած Տեսիլքին նախաւոր խմբագրութիւն մը հանդերձ վարդապետական Մեկնութեամբ — Ա. խմբագրութիւն:

գ. Տեսիլն եւ Մեկնութիւնը ենթարկուած են նոր խմբագրութեան գուշակական յաւելումներով եւ վերագրուած հաւանօրէն Դանիէլ Ասորույ — Բ. խմբագրութիւն:

դ. Այս Բ. խմբագրութիւնը մանր փոփոխութեամբ վերագրուած է ապա Սահակայ:

ա. Սկզբնագիրը:

36. Տեսիլքը առանձին առեալ՝ առանց Մեկնութեան, կ'երեւցնէ իւր մէջ ինքնայատուկ լեզու մը, ուրոյն ոճ եւ բարձրական գաղափարներու արտայայտութիւն մը, որոնք անծանօթ են Մեկնութեան: Արդէն Հ. Յ. Գաթիլըձեան նկատած էր, թէ Տեսիլքին լեզուն Ղ. Փարպեցույ չէ, այլ անոր ժամանակէն հնագոյն եւ մաքրագոյն: Այս գանազանութիւնը լեզուին կարծես թէ նաեւ խմբագիրը վեր հանել ուղած է՝ համարելով Տեսիլքը «Բան Հօր» եւ գրելով կարմրագեղ, եւ Մեկնութիւնը՝ բան Հրեշտակին եւ գրելով սեւադեղ: Ինձ կը թուի թէ Տեսիլքս իւր հարազատ մասերուն մէջ շատ հին է համեմատութեամբ Մեկնութեան, թերեւս Ե. դարու երկրորդ քառորդէն: Հ. Գաթիլըձեանի ըմբռնմամբ Տեսիլքս Գրիգորի Տեսլանս հետ «զոյգ մը կը կազմէ». կը նշմարուին հոս ձեւեր, գաղափարներ, խօսքեր եւ բառեր, որոնք «անկէ ասոր առնուած» են:

37. Դժբախտաբար Տեսիլքիս Սկզբնագիրը իւր անաղարտ ձեւին մէջ չէ հասած մեզի: Բ. խմբագիրը մուծած է հոն յաւելումներ, թերեւս նաեւ կատարած յաղաւումներ. եթէ առաջինները մասամբ կարող

ենք ընդգծել, չենք կրնար այժմ լրացնել յապառուած մասերը: Վերականգնելու համար Սկզբնաղբը կարեւոր կը համարիմ ամբողջութեամբ յառաջ բերել Տեսլեան ընազիրը: Այն մասերը, որոնք յաւելուած կը թուին ինձ, կ'առնեմ անկիւնաւոր փակազօրի մէջ:

ՏԵՍԻՒԲԸ

Եւ ահա յանկարծակի բացաւ հաստաւորութիւնն երկնից¹, ընդ որ ծագեաց լոյս[ն] սաստիկ եւ ելից գամենայն երկիր²: Եւ [կանգնեալ] երեւեցաւ ինձ յերկրի բեմք չորեքկուսի ամպեղէն, որոյ բարձրութիւնն հասանէր մինչեւ յերկինս³. Եւ լայնութիւնն տալածեալ լնոյր գամենայն երկիր: Եւ ի վերայ բեմքին երեւէր տեսրասկեղ յոսկոյ սրբոյ՝ խորանարդ, [ըստ արժանի սպասաւորութեան Տեառն,] ծածկեալ [լոյժ] բարակ կտաւով [սպիտակաբայ] գունով]: Եւ ի վերայ խորանարդի ծածկութիւն (տպ. ծածկութեան) [յայտնապէս] նշան տէրունական խաչին երեւէր⁴, [որոյ երեւելութիւնն ոչ նիւթեղէն, այլ լուսեղէն ցուցանիւր]:

Եւ յանկարծակի եղեւ շնչիւն խաղաղաւոր ուրջ. եւ բացաւ փեղկ մի ծածկութի կտաւոյն, ընդ որ հայեցեալ տեսի, եւ ահա կայր ի վերայ բեմքին սեղան չորեքկուսի ականակապ ի բազմագունի՝ ականց պատուականաց ընդելուզեալ: Եւ ի վերայ սեղանոյն կայր հաց մի սուրբ եւ ողկոյզ մի խաղողոյ [ըստ պատուականութեան խորհրդոյ երկնաւոր փրկութեան]:

Եւ մերձ ի սուրբ խորհուրդն երեւէր [ծառ մի] ձիթեմի վարսաւոր, պողպալից [լոյժ], գոլոյ ոչ կարէի առնուլ գշափ բարձրութեանն եւ զլայնութեանն. որոյ բերն էր բազմապտուղ եւ առոժ, եւ տեսիլն եւ գեղեցկութիւն անպատու [եւ] սքանչելի⁵:

Եւ որոշեալ չորք ոստք ձիթեմոյն ի խորհրդի կողմ<ն> երկրի ձկտեալ մօտէին. որոց երեք ոստք միաշափ [եւ հասարակապտուղք երեւէին.] եւ չորրորդն [ի նոցանէ] որպէս կիսարածին [եւ նուագապտուղ] ըստ

¹ Ազաթ. 382. «Յանկարծակի եղեւ ձայն... եւ բացաւ խորհուրդն յարկն հաստաւորութեան երկնից... տեսի բացեալ գիսատաւորութիւն երկնից»:
² Ազաթ. «Եւ լոյսն հոսեալ վերուստ մինչեւ յերկիր հասանէր»:
³ Հմմտ. Ազաթ. «Սիւն մի հրեղէն բարձր մինչեւ յոյժ»:
⁴ Ազաթ. «Եւ խաչն լուսոյ ի վերայ նորա»:
⁵ Ազաթ. «Տեսիլ աստուածակերպ սքանչելի անպատու»:

երկայնաչափութեան երիցն երեւէին: Եւ պտուղք չորեքունց ոստոցն ոչինչ բնաւ էին նմանք եւ կամ հաւասար<ք> [պտղաբերութեան պտղաբոյժ] ատոճութեանն այլ պտղոցն⁶ ձիթեմոյն, այլ նուագք [առաւել քուով] եւ վտիտք [ատոճութեամբ,] որպէս քէ ծնկեալք էին:

Եւ ընդ ահեկէ բեմքին տեսի աքոռ մի բարձր չորեքկուսի՝ ծովագոյն սառնակերպ եւ ծածկեալ քանար կտաւով [թխագունի]: Եւ վերացեալ կտաւն ի շնչմանէ քաղցր օդոյն [եկելոյ]՝ տեսի, եւ ահա սկուտոյ⁷ արծաթի մեծ ի վերայ աքոռոյն: Եւ ի վերայ սկտեղն կայր նափորտ մի բեհեգեայ ծալեալ [եւ եղեալ եւ առ նմին գունդ մի ոսկի բոլոր] եւ մագաղաք [հատուածաձեւ] չորեքկուսի, գրեալ [ի սկզբանն կարգս ինչ սակաւ⁸ ոսկետեսիլ գրով սքանչելապէս իբր քէ] ձեռամբ գրչի նարտարի:

*[Եւ ի միջոյ կողման մագաղաքին՝ հետի յոսկեգիր կարգացն՝ երեւէին այլ կարգք ինչ եղծեալք ջնջագիրք, որոց ոչինչ բնաւ երեւէր տեսիլ գրոյն եւ կամ կերպարան: Եւ հուսկ յեզր մագաղաքին, հետի ի ջնջագիր կարգացն դարձեալ տեսանէի այլ եւս կարգ մի եւ կէս կարգի՝ գրեալ ոսկեգիր գրով առաւել սքանչելապէս, ըստ տեսոյ առաջին կարգացն գրելոց ի սկզբանն մագաղաքին: Եւ կիսագիր կարգին⁹ մինչեւ ցմիջոց գրոյն՝ եւս առաւելագոյն էր ոսկուով եւ այլն կարմրադեղով էր¹⁰: Եւ կային շուրջ զծնօտիւք սկտեղն¹⁰ անթիւ բազմութիւնք տղայոց արուաց, այլ սակաւ եւ իգաց. ամենեքեան պայծառացեալք լուսագգեստք էին. բայց նառագայք փայլատակման պատմութեանց նոցա է՛ր որ կարմրագոյն արձակէին նշոյլս եւ է՛ր որ այլ երփն երփն եւ գոյնս ազգի ազգիս երեւէր¹¹: Եւ դէմք ամենեցուն ի սուրբ սեղանն հայէին՝ չդարձուցեալ բնաւ ուրեք գաչս իւրեանց ի խորհրդոյն փրկութեան¹²: Եւ սկսաւ յանկարծակի սաստկապէս դղրդմամբ շարժել աքոռն: Եւ գմանկտին (sic), գոր տեսանէի ի տիս տղայութեան՝ առժամայն վաղ-

⁶ Տպ. պտղոյն: Կարգա՝ այլոց պտղոց:
⁷ Տպ. սկուտեղ:
⁸ Կարգա՝ կարգք ինչ սակաւք:
⁹ Ասկէ մինչեւ տ. 66 երկրորդ խմբադրէն է:
¹⁰ Կարգա՝ «Ի կիսագիր կարգէն»:
¹¹ Ասկէ ցմիջ՝ Գ. խմբադրէն:
¹² Տպ. սկուտեղն:
¹³ Իմացիւր «Եւ էր որ երկն երկն դոյն» արձակէին: Բնագիրը անմտօրէն ընդարձակուած է:
¹⁴ Տես եւ վերագոյն «խորհրդոյ երկնաւոր փրկութեան», խմբադրէն արտայայտութեան ձեւն է:

վաղակի փոփոխեալք ի հասակ երիտասարդութեան՝ կատարեալք լինէին, եւ եղեալք բեւագգեցիկք՝ ի վեր ի սուրբ սեղանն՝ որ էր ընդելուզեալ ի բազմագունի ականց՝ քոռոցեալ բնակէին եւ զՍուրբ Աստուածն երգէին: Եւ համարձեալ սուրբ սեղանն հանդերձ նուազ ի վեր քան գրարձարութիւն հաստատութեան երկնից ծածկելը]:

38. Ինչպէս Գրիգորի Տեսլեան նոյնպէս այս Տեսիլքին նիւթն է կաթողիկէ Եկեղեցին: Հոս Եկեղեցոյ խորհրդաւոր պատկերը կը դժուր, նկատի առնելով անոր աստուածակերտ հիմնարկութիւնը, Պատարազի խորհուրդը, Ս. Հոգւոյն շնորհաբաշխումը, քահանայութիւնն եւ բանին քարոզութիւնը:

Ա. Խմբագրութիւն:

39. Տեսիլքին այս պատկերը քաջ ըմբռնած է առաջին Մեկնիչը Ա. Խմբագրութեան մէջ. որ եւ մեկնած է ըստ հասկացողութեան, վարդապետական ոճով, առանց ձգտելու ի վեր հանել հոն մարդարէական դուշակութիւններ սպառնայ դիպաց մասին: Անիկա նկատի ունի Տեսիլքը մինչեւ տող 54, այսինքն մինչեւ արծաթի սկտեղ երեւումը: Այս տեղոյս կը վերաբերի «Եւ տեսիլք ի վախճան է» (§ 40): Խմբագրիս լեզուն պարզ է, առանց դասական նկարագրի: Հմուտ է Մեկնիչը աստուածաբանական ուսմանց, կարգացած է ի մէջ այլոց Սաղմոսաց Մեկնութիւն մը: Հաւանօրէն 2. դարու առաջին կէսէն է Մեկնիչս:

Բ. Խմբագրութիւն:

40. Թէ՛ Տեսիլքը եւ թէ՛ անոր Մեկնութիւնը ընդարձակուած է մարդարէական պարբերութեանց, նաեւ հատուածներու յաւելումով: Այս Բ. Խմբագրիւրը, ինչպէս կ'երեւայ, անփոփոխ պահած է Ա. Խմբագրի Մեկնութիւնները. բայց կցած է անոնց մարդարէական դուշակութիւններ: Իր լեզուն չունի այն կոկիկութիւնը, պարզութիւնն եւ քերականական կանոնաւորութիւնը, ինչպէս ունէին Տեսիլքը եւ Մեկնութեան Ա. Խմբագրութիւնը:

Ա. եւ Բ. Խմբագրիւրներու զանազանութիւնը երեւան հանելու համար բաւական է հետեւեալ համեմատութիւնը, ուր Տեսլեան մի եւ նոյն տեղիքները մեկնուած են վարդապետական եւ մարդարէական ուղղութիւններով.

<p>Ա.</p> <p>1. Եւ ընդ ահեկէ բեմքին, որ ցուցաւ քեզ թոռ չորեքկուսի ծովագոյն սառնակերպ [զնստուին ցուցանէ զծիւռն ալէկոգահու քահանայութեանն Աստուած հաստատէ], յոր վերայ կայր սկուտ[ե]ղն արծաթի: Գանդի իբրեւ զարծաթ ընտիր եւ փորձ [լուսափայլ] յամենայն [լուսափայլ] յամենայն սաղմոսերգ <ու>ն վարդապետէ սուրբ Հոգւովն յասեն, թէ «Բանք Տեառն որպէս զարծաթ ընտրեալ եւ փորձեալ յերկրէ»: Եւ զասեն «Երկրէ» զիտասցես, եթէ զերեւունն Որդւոյն Աստուծոյ մարմնով ի սուրբ կուսէն յայտ առնէ մարդարէն (33, 27—34, 3): <Եւ Տեսիլք ի վախճան է>:</p>	<p>Բ.</p> <p>1. Եւ զի երեւեցաւ քեզ ծովագոյն սառնակերպ սիւլ աթոռոյն՝ նշանակեալ ցուցանէ զծիւռն ալէկոգահու քահանայութեանն Աստուած հաստատէ, յոր վերայ կայր սկուտեղն արծաթի: Գանդի եւ թխագոյն թանձր կտաւոցն ծածկունն՝ զորինակ բերէ ընդ վերայ կայր սկուտ[ե]ղն արծաթի: Գանդի իբրեւ զարծաթ ընտրեալ եւ փորձեալ յերկրէ»: Եւ զասեն «Երկրէ» զիտասցես, եթէ զերեւունն Որդւոյն Աստուծոյ մարմնով ի սուրբ կուսէն յայտ առնէ մարդարէն (33, 27—34, 3): <Եւ Տեսիլք ի վախճան է>:</p>
<p>3. Եւ զի տեսեր զպտուղ ոստոցն թառամս եւ ծընկեալս եւ ոչինչ բնաւ նմանս ա՛յլ պտղոցն որ ի Տեսիլքին էին, տեսաւ ճշգրտապէս եւ ծանիր, զի բարձեալ է սէր եւ արդարութիւն յամենայն մարդոց, որք ստութեամբ եւ ոչ ստուգութեամբ կարծեցուցանեն զանձինս սիրունս եւ պատուիրանս պահան: Եւ այն յայտնի զրեալ կայ եւ կնքեալ ի զպտուղեան ամենազիւտին Աստուծոյ, որ ներք երկայնմտութեամբ եւ հաստուցանէ անաշատութեամբ (33, 20—26):</p>	<p>3. Եւ ոստք չորք ձիթեմոյն, որ ի խորհրդական կողմն երկրի ձգտէին՝ երեւելովն երեք ոստք հաճիթեմոյն էին, տեսաւ այն առաւել միաթիւր պտղովք, եւ չորրորդն ի նոսա՝ զոր կիսաշափ ըստ հասարակութեան երկնի եւ ոչ ստուգութեամբ կարծեցուցանեն զանձինս սիրունս եւ պատուիրանս պահան: Եւ այն յայտնի զրեալ կայ եւ կնքեալ ի զպտուղեան ամենազիւտին Աստուծոյ, որ ներք երկայնմտութեամբ եւ հաստուցանէ անաշատութեամբ քոց եւ լուր եւ սասցից քեզ զոր ինչ սահմանեացն Բարձրեալն. յայտնեմէ մինչեւ ի վախճան ալէկոգահու սասանբեալեաց եւ կէս տասներեկի համառօտեցի ի վերայ ամենայն ալէկոգահու:</p>

6. Եւ պտուղը չորե-
ցունց ոստոցն ոչինչ բնաւ
էին նմանք եւ կամ հաւա-
սարք պտղաբերութեան
պտղաբոյժ ատոմութեան
այլ նուազ ատուել թուով
եւ վտխով ատուել թուով
որպէս թէ ծնկեալ էին:

7. Գրեալ է սկզբանն
կարգս ինչ սակաւ ոսկե-
տեսիլ զբող... եւ ի միջոյ
կողման մազազաթին...
այլ կարգը ինչ եղծեալ
Ընջազերք...:

8. Եւ հուսի յեզր մա-
զազաթին... տեսանէի այլ
եւս կարգ մի եւ կէս կար-
գի՝ զբեալ ոսկեզեր զբող
առուել սխմելիապէս, ըստ
տեսոյ առաջին կարգացն
զբեալ ի սկզբան մազա-
զաթին...:

9. Կային շուրջ զծնո-
տիւք սկտեղն անթիւ բազ-
մութիւնք սողայոց... զէմք
ամենեցուն ի սուրբ սե-
ղանն հայէին՝ չղարձու-
ցեալ բնաւ ուրեք գաչս
իւրեանց ի խորհրդոյն փըր-
կութեան:

45. Ուշադրութեամբ կարգալով Տեսիլ-
քիս Բ. խմբագրութիւնն եւ անոր Մեկնու-
թիւնը, կը թուի ինձ թէ նախնարար իբրեւ
Տեսանող նկատի առնուած է Դանիէլ ասորի
Քորեպիսկոպոս, յեցած Փառատեայ Բիւզան-
դեայ հետեւեալ տեղիքին վրայ, զոր յառաջ
կը բերեմ իր կարեւոր մասերու մէջ:

«Արդ միտժողով եղեալ մեծամեծ նա-
խարարացն եւ ի մի վայր եկեալք՝ խոր-
հուրդս¹⁵ խորհեցան, հաւանեցուցին զթա-
զաւորն ամէլ զծերունին զԴանիէլ յիւրեանց
բանակն, զի ամցեն կացուցեն զնա իւրեանց
զլուխ առաջնորդ, զի նստցի նա յաթոռն հայ-
րապետական: ... Եւ իբրեւ մտանէր առաջի
թագաւորն Տիրանայ քորեպիսկոպոսն մեծն
Դանիէլ, անդէն ի ձեռն առնոյր զկշտամբու-
թիւն յանդիմանութեանն: Սկսեալ խօսել
<եւ> յառաջ մատուցեալ ասէր եթէ Ընդէ՞ր
մոռացարուք դուք զԱստուած զարարիչն ձեր
... զձեր քարոզն եւ զհրաւիրակն, զառա-
քեալն, առ ձեզ եկեալն սպանէք... զի թէ-
պէտ եւ դուք առ ձերում անմտութեանն տի-
րաստան ազգին խորհրդոյն հաղորդեցայք

¹⁵ Տպ. խորհուրդը.

6. Որոց չորեցունց
պտուղն վտխով էին եւ
բառամբ. եւ բերքն պա-
կաւ եւ անմանք բան զայլ
ատոմութեանի պտուղս ձի-
թեանոյն... Տեսեր զպտուղս
ոստոցն քառամս եւ ծըն-
կեալս եւ ոչինչ բնաւ
նմանս այլ պտղոցն...:

7. Գրեալ է սկզբանն
կարգս ինչ ոսկեզեր զբող
... ի միջոյ կողմն մա-
զազաթին... կարգը ինչ
խանգարեալ էւ Ընջա-
զերք...:

8. Եւ այլ կարգն եւ
միւս եւս կէս կարգին,
... զբեալ սքանչելապէս
ոսկեզեր ի ստորին եզեր
մազազաթին... ծանոց
տեսոյ առաջին կարգացն
ոսկեզեր կարգով եւ կար-
գակիսաւն...:

9. շուրջ կալով ի վե-
րայ արծաթի սկտեղն...
տեսեր շուրջ գաստուա-
ծային սեղանովն պարիով
զտոյսն, չիայեիով բնաւ ի
սայթափունս սնտի հե-
քանական պաշտաման:

46. Դանիէլ իւր խօսքերը Տիրանի հաս-
ցէին է ուղղած. իրեն եղած յայտնութիւնը
կը պատմէ արքունական տան ապագայի մա-
սին. իր Տեսիւնն մեկնիչը ինքն է եւ համար-
ձակ կը սպանայ արքային: Այսպէս նաեւ
Տեսիլքի Բ. խմբագրութեան մէջ հրեշտակը
նկատի ունի ուղղակի Արչակունեաց հարս-
տութիւնը եւ երկրորդաբար միայն Գրիգորի
տունը. ըստ այսմ ալ կը խօսի. «Լուսեցէ մերձ
ընդ մերձ թագաւորութիւն յազգէդ Արչա-
կունեաց եւ քահանայութիւն ի ցեղէ արժա-
նաւոր քահանայապետին Գրիգորի» (34).
«զարձեալ յառնէ թագաւոր յազգէդ Արչա-
կունեաց եւ նորոզի աքոռ հայրապետութեան
ի շառաւեղէ սրբոյն Գրիգորի» (34): Անգամ
մը նաեւ «յազգէ նախարարացդ Հայոց» (35):
Ուստի երկիցս «յազգէդ Արչակունեաց», դ զի-
մորոչ յօդով, մինչ երբ խօսքը Գրիգորի տան
մասին կ'ըլլայ, կ'ըսուի անորոչաբար. «ի
ցեղէ... Գրիգորի». «որք ի գաւաղէ երանել-
ւոյն Գրիգորի յաջորդեցեն արժանապէս գա-
քոռ քահանայապետութեան» (34). «նստե-
լոց են քահանայապետք ոմանք յաքոռ սրբոյն

Հրեղորի» (34). «նորոզի աքոռ հայրապե-
տութեան ի շառաւեղէ Գրիգորի» (34). «նստի
քահանայապետ արգար ի ցեղէ սրբոյն Գրի-
գորի» (35). «միւս եւ զաւակ նորին յաջոր-
դեալ գաքոռ քահանայապետութեան» (35):
Կը սպասուէր, որ Հրեշտակը, որ Ս. Սահա-
կին հետ կը խօսէր, ըսէր. «զաթոռ», «ի
զաւակէդ», «ի շառաւեղէդ», «ի ցեղէդ» եւն:
Արտայայտութեան այս ձեւը կը փոխէ
Հրեշտակը միայն Մեկնութեան վերջաւորու-
թեան. «ահա յարգանդէ զաւակիդ, որ տուաւ
քեզ յարարէն» (35). «ծանոց քեզ... որպէս
<եւ> ճշմարիտ նախնայն քում՝ առն Աս-
տուծոյ Ս. Գրիգորի¹⁸». ուր յայտնապէս
Յուսիկի դէմքը կը ցցուի:
47. Արդեամբք ալ Դանիէլի Տեսիւնն հետ
հիւստեած է նաեւ Ս. Յուսիկի Տեսիլը, զոր
զտած է խմբագիրը նոյնպէս Փ. Բիւզանդեայ
Պատմութեան մէջ (Գ. 5, էջ 11—12 Պատկ.):
Մինչ Դանիէլ ասորի իւր Տեսիւնն մէջ
Հայաստանի քաղաքական ապագան նկատի
ունի, Ս. Յուսիկ կ'ընդունի իւր Տեսիւնն մէջ
հայ Եկեղեցւոյ ապագայի մասին յայտնու-
թիւններ: Փ. Բիւզանդեայ Պատմութեան մէջ
կը կարդանք. «Մինչ նա (Յուսիկ) հոգացեալ
վասն իւր <ոց> ծննդոց մնացելոց զաւակաց
(տպ. զաւակին. այսինքն՝ Պապայ եւ Աթա-
նազինեայ). եւ վասն այսորիկ հոգալով կայր
յազօթս առ Տէր. եւ երեւեցաւ նմա հրեշտակ
Տեսուն ի տեսեանն եւ ասէ ցնա. Յուսիկ
որդի Գրիգորի, մի երկնչիւր. զի լուաւ Տէր
աղօթից քոց. եւ ահա ծնցիմ ի քոց զաւա-
կացդ այլ գաւաղք. զի լիցիմ¹⁹ նոքա ի լու-
սաւորութիւն գիտութեան եւ աղքիւրք հո-
գեւոր իմաստութեան Հայաստան աշխարհիս:
Եւ ի նոքանէ բղխեցեն շնորհք պատուիրա-
նացն Աստուծոյ եւ խաղաղութիւն բազում եւ
չինութիւն եւ հաստատութիւն բազում եկե-
ղեցեաց ի Տեսունէ նոքա տացի, բազում յաղ-
թութեամբ եւ մեծաւ զօրութեամբ. եւ բա-
զում մոլ<որ>եալք զարձցին ի ճանապարհս
ճշմարտութեան. որով եւ Քրիստոս բազում

Հրեղորի» (34). «նորոզի աքոռ հայրապե-
տութեան ի շառաւեղէ Գրիգորի» (34). «նստի
քահանայապետ արգար ի ցեղէ սրբոյն Գրի-
գորի» (35). «միւս եւ զաւակ նորին յաջոր-
դեալ գաքոռ քահանայապետութեան» (35):
Կը սպասուէր, որ Հրեշտակը, որ Ս. Սահա-
կին հետ կը խօսէր, ըսէր. «զաթոռ», «ի
զաւակէդ», «ի շառաւեղէդ», «ի ցեղէդ» եւն:
Արտայայտութեան այս ձեւը կը փոխէ
Հրեշտակը միայն Մեկնութեան վերջաւորու-
թեան. «ահա յարգանդէ զաւակիդ, որ տուաւ
քեզ յարարէն» (35). «ծանոց քեզ... որպէս
<եւ> ճշմարիտ նախնայն քում՝ առն Աս-
տուծոյ Ս. Գրիգորի¹⁸». ուր յայտնապէս
Յուսիկի դէմքը կը ցցուի:
47. Արդեամբք ալ Դանիէլի Տեսիւնն հետ
հիւստեած է նաեւ Ս. Յուսիկի Տեսիլը, զոր
զտած է խմբագիրը նոյնպէս Փ. Բիւզանդեայ
Պատմութեան մէջ (Գ. 5, էջ 11—12 Պատկ.):
Մինչ Դանիէլ ասորի իւր Տեսիւնն մէջ
Հայաստանի քաղաքական ապագան նկատի
ունի, Ս. Յուսիկ կ'ընդունի իւր Տեսիւնն մէջ
հայ Եկեղեցւոյ ապագայի մասին յայտնու-
թիւններ: Փ. Բիւզանդեայ Պատմութեան մէջ
կը կարդանք. «Մինչ նա (Յուսիկ) հոգացեալ
վասն իւր <ոց> ծննդոց մնացելոց զաւակաց
(տպ. զաւակին. այսինքն՝ Պապայ եւ Աթա-
նազինեայ). եւ վասն այսորիկ հոգալով կայր
յազօթս առ Տէր. եւ երեւեցաւ նմա հրեշտակ
Տեսուն ի տեսեանն եւ ասէ ցնա. Յուսիկ
որդի Գրիգորի, մի երկնչիւր. զի լուաւ Տէր
աղօթից քոց. եւ ահա ծնցիմ ի քոց զաւա-
կացդ այլ գաւաղք. զի լիցիմ¹⁹ նոքա ի լու-
սաւորութիւն գիտութեան եւ աղքիւրք հո-
գեւոր իմաստութեան Հայաստան աշխարհիս:
Եւ ի նոքանէ բղխեցեն շնորհք պատուիրա-
նացն Աստուծոյ եւ խաղաղութիւն բազում եւ
չինութիւն եւ հաստատութիւն բազում եկե-
ղեցեաց ի Տեսունէ նոքա տացի, բազում յաղ-
թութեամբ եւ մեծաւ զօրութեամբ. եւ բա-
զում մոլ<որ>եալք զարձցին ի ճանապարհս
ճշմարտութեան. որով եւ Քրիստոս բազում

¹⁸ Տպ. զխաչիւնք:
¹⁹ Փ. Բիւզ. Գ. 14 (էջ 33—36 տպ. Պատկ.):

Գրիգորի» (34). «նորոզի աքոռ հայրապե-
տութեան ի շառաւեղէ Գրիգորի» (34). «նստի
քահանայապետ արգար ի ցեղէ սրբոյն Գրի-
գորի» (35). «միւս եւ զաւակ նորին յաջոր-
դեալ գաքոռ քահանայապետութեան» (35):
Կը սպասուէր, որ Հրեշտակը, որ Ս. Սահա-
կին հետ կը խօսէր, ըսէր. «զաթոռ», «ի
զաւակէդ», «ի շառաւեղէդ», «ի ցեղէդ» եւն:
Արտայայտութեան այս ձեւը կը փոխէ
Հրեշտակը միայն Մեկնութեան վերջաւորու-
թեան. «ահա յարգանդէ զաւակիդ, որ տուաւ
քեզ յարարէն» (35). «ծանոց քեզ... որպէս
<եւ> ճշմարիտ նախնայն քում՝ առն Աս-
տուծոյ Ս. Գրիգորի¹⁸». ուր յայտնապէս
Յուսիկի դէմքը կը ցցուի:
47. Արդեամբք ալ Դանիէլի Տեսիւնն հետ
հիւստեած է նաեւ Ս. Յուսիկի Տեսիլը, զոր
զտած է խմբագիրը նոյնպէս Փ. Բիւզանդեայ
Պատմութեան մէջ (Գ. 5, էջ 11—12 Պատկ.):
Մինչ Դանիէլ ասորի իւր Տեսիւնն մէջ
Հայաստանի քաղաքական ապագան նկատի
ունի, Ս. Յուսիկ կ'ընդունի իւր Տեսիւնն մէջ
հայ Եկեղեցւոյ ապագայի մասին յայտնու-
թիւններ: Փ. Բիւզանդեայ Պատմութեան մէջ
կը կարդանք. «Մինչ նա (Յուսիկ) հոգացեալ
վասն իւր <ոց> ծննդոց մնացելոց զաւակաց
(տպ. զաւակին. այսինքն՝ Պապայ եւ Աթա-
նազինեայ). եւ վասն այսորիկ հոգալով կայր
յազօթս առ Տէր. եւ երեւեցաւ նմա հրեշտակ
Տեսուն ի տեսեանն եւ ասէ ցնա. Յուսիկ
որդի Գրիգորի, մի երկնչիւր. զի լուաւ Տէր
աղօթից քոց. եւ ահա ծնցիմ ի քոց զաւա-
կացդ այլ գաւաղք. զի լիցիմ¹⁹ նոքա ի լու-
սաւորութիւն գիտութեան եւ աղքիւրք հո-
գեւոր իմաստութեան Հայաստան աշխարհիս:
Եւ ի նոքանէ բղխեցեն շնորհք պատուիրա-
նացն Աստուծոյ եւ խաղաղութիւն բազում եւ
չինութիւն եւ հաստատութիւն բազում եկե-
ղեցեաց ի Տեսունէ նոքա տացի, բազում յաղ-
թութեամբ եւ մեծաւ զօրութեամբ. եւ բա-
զում մոլ<որ>եալք զարձցին ի ճանապարհս
ճշմարտութեան. որով եւ Քրիստոս բազում

Հրեղորի» (34). «նորոզի աքոռ հայրապե-
տութեան ի շառաւեղէ Գրիգորի» (34). «նստի
քահանայապետ արգար ի ցեղէ սրբոյն Գրի-
գորի» (35). «միւս եւ զաւակ նորին յաջոր-
դեալ գաքոռ քահանայապետութեան» (35):
Կը սպասուէր, որ Հրեշտակը, որ Ս. Սահա-
կին հետ կը խօսէր, ըսէր. «զաթոռ», «ի
զաւակէդ», «ի շառաւեղէդ», «ի ցեղէդ» եւն:
Արտայայտութեան այս ձեւը կը փոխէ
Հրեշտակը միայն Մեկնութեան վերջաւորու-
թեան. «ահա յարգանդէ զաւակիդ, որ տուաւ
քեզ յարարէն» (35). «ծանոց քեզ... որպէս
<եւ> ճշմարիտ նախնայն քում՝ առն Աս-
տուծոյ Ս. Գրիգորի¹⁸». ուր յայտնապէս
Յուսիկի դէմքը կը ցցուի:
47. Արդեամբք ալ Դանիէլի Տեսիւնն հետ
հիւստեած է նաեւ Ս. Յուսիկի Տեսիլը, զոր
զտած է խմբագիրը նոյնպէս Փ. Բիւզանդեայ
Պատմութեան մէջ (Գ. 5, էջ 11—12 Պատկ.):
Մինչ Դանիէլ ասորի իւր Տեսիւնն մէջ
Հայաստանի քաղաքական ապագան նկատի
ունի, Ս. Յուսիկ կ'ընդունի իւր Տեսիւնն մէջ
հայ Եկեղեցւոյ ապագայի մասին յայտնու-
թիւններ: Փ. Բիւզանդեայ Պատմութեան մէջ
կը կարդանք. «Մինչ նա (Յուսիկ) հոգացեալ
վասն իւր <ոց> ծննդոց մնացելոց զաւակաց
(տպ. զաւակին. այսինքն՝ Պապայ եւ Աթա-
նազինեայ). եւ վասն այսորիկ հոգալով կայր
յազօթս առ Տէր. եւ երեւեցաւ նմա հրեշտակ
Տեսուն ի տեսեանն եւ ասէ ցնա. Յուսիկ
որդի Գրիգորի, մի երկնչիւր. զի լուաւ Տէր
աղօթից քոց. եւ ահա ծնցիմ ի քոց զաւա-
կացդ այլ գաւաղք. զի լիցիմ¹⁹ նոքա ի լու-
սաւորութիւն գիտութեան եւ աղքիւրք հո-
գեւոր իմաստութեան Հայաստան աշխարհիս:
Եւ ի նոքանէ բղխեցեն շնորհք պատուիրա-
նացն Աստուծոյ եւ խաղաղութիւն բազում եւ
չինութիւն եւ հաստատութիւն բազում եկե-
ղեցեաց ի Տեսունէ նոքա տացի, բազում յաղ-
թութեամբ եւ մեծաւ զօրութեամբ. եւ բա-
զում մոլ<որ>եալք զարձցին ի ճանապարհս
ճշմարտութեան. որով եւ Քրիստոս բազում

Հրեղորի» (34). «նորոզի աքոռ հայրապե-
տութեան ի շառաւեղէ Գրիգորի» (34). «նստի
քահանայապետ արգար ի ցեղէ սրբոյն Գրի-
գորի» (35). «միւս եւ զաւակ նորին յաջոր-
դեալ գաքոռ քահանայապետութեան» (35):
Կը սպասուէր, որ Հրեշտակը, որ Ս. Սահա-
կին հետ կը խօսէր, ըսէր. «զաթոռ», «ի
զաւակէդ», «ի շառաւեղէդ», «ի ցեղէդ» եւն:
Արտայայտութեան այս ձեւը կը փոխէ
Հրեշտակը միայն Մեկնութեան վերջաւորու-
թեան. «ահա յարգանդէ զաւակիդ, որ տուաւ
քեզ յարարէն» (35). «ծանոց քեզ... որպէս
<եւ> ճշմարիտ նախնայն քում՝ առն Աս-
տուծոյ Ս. Գրիգորի¹⁸». ուր յայտնապէս
Յուսիկի դէմքը կը ցցուի:
47. Արդեամբք ալ Դանիէլի Տեսիւնն հետ
հիւստեած է նաեւ Ս. Յուսիկի Տեսիլը, զոր
զտած է խմբագիրը նոյնպէս Փ. Բիւզանդեայ
Պատմութեան մէջ (Գ. 5, էջ 11—12 Պատկ.):
Մինչ Դանիէլ ասորի իւր Տեսիւնն մէջ
Հայաստանի քաղաքական ապագան նկատի
ունի, Ս. Յուսիկ կ'ընդունի իւր Տեսիւնն մէջ
հայ Եկեղեցւոյ ապագայի մասին յայտնու-
թիւններ: Փ. Բիւզանդեայ Պատմութեան մէջ
կը կարդանք. «Մինչ նա (Յուսիկ) հոգացեալ
վասն իւր <ոց> ծննդոց մնացելոց զաւակաց
(տպ. զաւակին. այսինքն՝ Պապայ եւ Աթա-
նազինեայ). եւ վասն այսորիկ հոգալով կայր
յազօթս առ Տէր. եւ երեւեցաւ նմա հրեշտակ
Տեսուն ի տեսեանն եւ ասէ ցնա. Յուսիկ
որդի Գրիգորի, մի երկնչիւր. զի լուաւ Տէր
աղօթից քոց. եւ ահա ծնցիմ ի քոց զաւա-
կացդ այլ գաւաղք. զի լիցիմ¹⁹ նոքա ի լու-
սաւորութիւն գիտութեան եւ աղքիւրք հո-
գեւոր իմաստութեան Հայաստան աշխարհիս:
Եւ ի նոքանէ բղխեցեն շնորհք պատուիրա-
նացն Աստուծոյ եւ խաղաղութիւն բազում եւ
չինութիւն եւ հաստատութիւն բազում եկե-
ղեցեաց ի Տեսունէ նոքա տացի, բազում յաղ-
թութեամբ եւ մեծաւ զօրութեամբ. եւ բա-
զում մոլ<որ>եալք զարձցին ի ճանապարհս
ճշմարտութեան. որով եւ Քրիստոս բազում

¹⁸ Համեմատէ այս տեղիքը Տեսիւնն Յոռաշար-
նին հետ, ուր կ'ըսուի. «ձեռաց զբեզ ըստ օրինակի
նախնայն քո բարեպաշտի սրբոյն Գրիգորի» (27):
Հրեշտակը կ'անդամակէ հոս Գրիգորի Տեսիլը, զոր աչքի
տուով ունեցած է Տեսիլքին խմբագիրը:
¹⁹ Տպ. «ճնցիմ... զաւակ... զի լիցիմ... աղ-
քիւրք...»: Սոսքը Յուսիկն որդւոց Պապի եւ Աթանա-
զինէսի մասին է. որոնց շառաւեղէն պիտի ծնին ներ-
սէս: Այսպէս յազնակի կը պահանջէ տեղիքս յետագայ
պարբերութիւնը, թէ եւ ներքին անձին կը հայի ամ-
բողջութիւնը. լուսեան ակնարկուած են նաեւ Սահակ
եւ Մաշտոց:

լեզուօք փառաւորեցի նոքօք. որք սիւնք եկե-
ղեցեաց լինիցին եւ մատակարարք բանին կե-
նաց. եւ հիմունք հաւատոց, պաշտօնեայք
Քրիստոսի...: Եւ բազում տունիք պտղա-
բերք եւ շայեկանք եւ օգտակարք ի հոգեւոր
գրախտին ի նոցա մշակութեանն աջոյն տնկեա-
ցին եւ ընկալցին զօրհնութիւն յԱստուծոյ:
Իսկ որք ոչն կամիցին տնկել նոքօք եւ ի նոյն
հոգեւոր ցօղոյն գիտութեանէ ըմպել՝ խոտան
գտանիցին մերկեալք յանէծս. եւ վաղճան
նոցա լիցի սյրուան հրոյն: Բազում անգամ
վասն Տեսուն լինիցին նոքա ի հետ եւ ի նա-
խանձ [յ]անարժանացն, այլ կացցեն ի հա-
ւատս անշարժ իբրեւ զվէմ եւ յաղթեցեն
նոցա համբերութեամբ բազմաւ: — Եւ յետ
նոցա թագաւորեցէ ստութիւն յապարասան,
յանձնասէր, յարծաթասէր, ի մտախար, յան-
պատսպարան, յանպիտան, ի սուտակ եւ ի
բանսարկու մարդկանէ. եւ ապա եթէ ոք
զացի՝ որ եւ արասցէ ունել զուխտ հաստա-
տութեան հաւատոյ, հաղիւ հաղիւ: Եւ զայս
ամենայն լուեալ մանուկն Յուսիկ ի հրեշ-
տակէն՝ միտթարութեամբ մեծաւ զօհանայր
զՏեսունէ Աստուծոյ, որ արժանի արար զնա
այսպիսի յայտնութեան պատասխանոյն»:

Ս. Յուսիկի Տեսիլքը կ'ընդգրկէ մօտա-
ւորապէս 360—385 շրջանը, երբ Ներսէս Մեծ
կ'ընտրուի Հայոց հայրապետ, եւ անոր մա-
հուրնէ վերջը կու գան անարժան աթոռա-
կարներ:
Յուսիկն եւ Դանիէլի Տեսիլքներու հի-
ման վրայ զարգացած է Բ. խմբագրութիւնը:
48. Ըստ Բ. խմբագրութեան կ'ենթադրէ
Տեսիլը զուշակութեանց լրանալուն համար
չորս ժամանակամիջոց, այս ինքն 1 + 1 +
1 + 1/2: Այս ժամանակամիջոցները արտայայ-
տուած է Տեսիւնն մէջ այսպէս.

Ձիթենին ունի չորս ոստ, ասոնցմէ երեքը
«միաշառիք եւ հա<ւա>սարա[կա]լտուղք
երեւէին եւ չորրորդն [ի նոցանէ] որպէս կի-
սարածին [եւ նուազապտուղ] ըստ երկայնա-
չափութեան երեցն [երեւէին]»: Այս երեւոյթը
կը բացատրէ հրեշտակը այսպէս. «Երեք տաս-
ներեակք ամաց եւ կէս տասներեկին համա-
ուօտեացի(ն) ի վերայ ամենայն աշխարհի
մինչեւ յերեւումն պղծոյն անապատի, զոր
Դանիէլ մարգարէի ասացեալ է սուրբ Հոգ-
ւոյն. եւ լինին սոքա յայտնապէս թուով ամբ
ՅԾ՝ ըստ միազոյզ պտղոց երկոց ոստոցն եւ
կիսոյն» (33):

Այս 350 տարիներու ծագման մասին թող-

լով խօսել յետոյ, նկատենք այժմ այն անց-
քերը, որոնք տեղի պիտի ունենան այս չորս
ժամանակամիջոցներու մէջ: Այս մասին ու-
նինք ուրիշ հասուած մը Տեսլան մէջ, այն է
«Մագաղաթն հասուածաձեւ», ուր գրուած
են իւրաքանչիւր ժամանակամիջոցին դէպ-
քերը, զորոնք հրեշտակը կը բացատրէ այս-
պէս.

Ա. Միջոց կամ Տասներեակ. «Մագաղաթն
հասուածաձեւ որ ցուցաւ քեզ գրեալ ի
սկզբանն կարգս ինչ ոսկեղէն գրով՝ գծե-
նադրութիւն արանց սրբոց եցոյց քեզ շնորհօք
Հոգւոյն սրբոյ. որք ի գաւակէ երանելոյն
Գրիգորի յաջորդեսցեն արժանապէս յաթոս
փահանայապետութեան. նոքա են արք ըն-
տիրք²⁰, գրեալք ոսկետեսիլ գրով ի դպրու-
թիւն կենաց»:

Նկատի ունի Տեսիլը.

Փառներսէ	} 350—373.
Շահակ եւ	
Ներսէս Մեծ	

Բ. Միջոց կամ Տասներեակ. «Եւ զի երե-
ւեցան ի միջոյ կողմն մագաղաթին՝ հեռի յոս-
կեցիր կարգացն՝ կարգք ինչ խանգարեալք եւ
ջնջագիրք, գիտեա՛, զի նստելոց են փահա-
նայապետք ոմանք յաթոս սրբոյն Գրիգորի,
որք ոչ ըստ հրամանի սրբոց առաքելոցն եւ
ոչ ըստ կանոնի սուրբ ժողովոյն ՅԺԸիցն լի-
նին ձեռնադրեալք յերկնաւոր պատիւ, այլ
ըստ փառաց աշխարհիս ձգտին ի պատիւն
յանդգնութեամբ. որք են արժաքատէրք ա-
ռաւել քան աստուածատէրք²⁰: Եւ վասն զի
խոտան է փահանայութիւնն եւ ոչ ըստ հա-
նոյից Բարձրելոյն՝ ջնջեալ են նոքա ի դպրու-
թեանէ երկնից բարութեանն...»:

Սուրբ հեռեւեալ կաթողիկոսներու մա-
սին է, որոնք Աղբիւնոսի տնէն էին եւ չու-
նէին Կեսարիոյ մետրապոլիտն ձեռնադրու-
թիւնը, ուստի եւ խափանուած էր անոնց իշ-
խանութիւնը եպիսկոպոս ձեռնադրելու («խո-
տան է քահանայութիւնն». հմմտ. Փ. Բիւզ.
Ե. 29, 2. 2—4).

Յուսիկ Բ.	} 373—386.
Չաւէն	
Շահակ	
Ասպուրակէս	

Գ. եւ Դ. Միջոց կամ «Տասներեակ եւ
կէս Տասներեակի»: «Եւ այլ կարգն եւ միւս

²⁰ Հմմտ. Յուսիկ Տեսիլը (§ 47):

եւս կէս կարգին որ երեւեցաւ քեզ գրեալ
սքանչելապէս ոսկի գրով ի ստորին եզեր
մագաղաթին, ծանիր հաւաստեալ, զի մերձ
յերեւումն պղծոյն անապատի դարձեալ յառնէ
քաղաւոր յազգէդ Արշակունեաց եւ նորոգի
աթոս հայրապետութեան ի շառակեղ սրբոյն
Գրիգորի: ...²¹ [Եւ ի ժամանակս գոռոգա-
ցելոյ քշնամոյն արդարութեան նստի փահա-
նայապետ արդար ի ցեղէ Գրիգորի. եւ փա-
հանայացեալ առաջինն՝ կատարէ գաւուրս
իւր կրեալ նգնութիւնս բազումս ի սուտ ա-
ռաքելոց իշխանին կարստեան, եւ վախճանի
խաղաղական հանգստիւ եւ ոչ սրով: Եւ միւս
գաւակ նորին յաջորդեալ գաթոս փահանայա-
պետութեանն՝ բազում եւ ազգի ազգի համ-
բերեալ քերանց եւ գանից, սովոյ եւ հալա-
ծանաց եւ դառն նեղութեան՝ ժամանակս
բազումս՝ յանօրէն իշխանին դահնացն՝ սրով
ընկալցի զվնիւ մարտիրոսութեանն] (35):

Կ'ահնարկուին Գ. Սահակ 386—438:

[Գ. Յովսէփ 439—453]:

Այսպէս Տեսիլը կ'ենթադրէր երեք ժա-
մանակամիջոց լիաթիւ եւ միաչափ եւ կէս
ժամանակամիջոցի, որոնք կը կոչուին «տաս-
ներեակ»: «Տասներեակ» այս տեղ արտայայ-
տութեան ձեւ մըն է, որ կ'ամփոփէ իւր մէջ
30 տարիներու գումարում. ըստ այսմ՝

$$3 \times 30 + 15 = 105$$

Դանիէլի մահէն (սովորական հաշուով + 348)
մինչեւ 453, երբ նահատակուեցաւ Յովսէփ,
ճշդիւ 105 տարի կ'ընէ:

Տեսիլքն եւ անոր Մեկնութիւնը այս ըս-
վանդակութեամբ կը կազմէր Բ. խմբադրու-
թեան էական ծաւալը: Կը կասկածիմ սա-
կայն, թէ Սահակի եւ Ս. Յովսէփի մասին
գուշակուած մանրամասնութիւնները հարա-
զատ ըլլան Բ. խմբադրութեան: Ինձ կը թուի
թէ այս քառակուսի փակագծի մէջ առնուած
հասուածք բռնի յաւելուած մըն է Գ. խմբա-
դրէն (տե՛ս վարը): Կը համարիմ թէ Բ.
խմբադրութեան մէջ այս վերջին 1½ Միջոցը
կ'ամփոփէր միայն Ս. Սահակի կաթողիկո-
սութեան երկար՝ 63 տարիները այսպէս.

Ա. Միջոց՝	25 տարի.
Բ. „	25 „
Գ. „	25 „
Դ. „	13 „

²¹ Այս հասուածն ամբողջութեամբ Գ. խմբա-
դրէն է:

Ստացուած 88 տարիները գումարելով
350 տարւոյն վրայ, որ մեր երակէտն էր, կը
հասնինք 438 տարւոյն, որ Ս. Սահակի մա-
հուան տարին է: Այս դէպքին խստիւ կա-
պուելու է ճշգրիտ ժամանակագրութեան:

Գ. խմբագրութիւն:

49. Երրորդ խմբադրը կը ձգտի Տեսիլքս
ներկայացնել իբրեւ Մեծին Սահակի եղած
յոյսնութիւն: Իրեն ալ ծանօթ եղած են
Յուսիկն եւ Դանիէլի Տեսիլքները. անոնց
յատակագծի վրայ ձեւած է իւր խմբադրու-
թիւնը: Տեսիլքի Սահակի վերագրումը հար-
կադրած է խմբադրը Բ. խմբադրութեան
ժամանակամիջոցները 50 տարւով յառաջ մղել
եւ իր կարգին մարգարէութեանց ծիրը ընդ-
լայնել:

Նկատի առնելով այժմ այս՝ Յուսիկն եւ
Դանիէլի Տեսիլքներու վրայ զարգացած «Սա-
հակայ» Տեսիլքը, հեռեւեալ համեմատական
պատկերը կը ստանանք.

ա. Յուսիկ մտախորհ է իւր դաւանելու մասին, վասն զի անոնք չունին սէր եկեղեցական հոշման:	ա. Սահակ մտախորհ է Գրիգորի տան յաջորդու- թեան մասին, վասն զի չունի ինքը արու դաւակ:
բ. Աստուծոյ հրեշտակը ի Տեսլան կը բաշխէրէ Պատիկ, ակնարկելով ա- նոր թոռան Ներսիսի պոպ- ժառ զործերու մասին:	բ. Աստուծոյ հրեշտակը ի Տեսլան կը խրախուսէ Պատիկ, յայտնելով թէ իւր թոռներէն պիտի ելին ընտիր անձինք, որոնք պիտի փառաւորեն իրենց զործերով զԱստուած:

գ. Յուսիկ կը վախճանի:	գ. Շմուէլ կը վախճանի:
դ. Նախարարները զԴա- նիէլ կը հրաւիրեն յաթոս:	դ. Նախարարները կը ինդրեն, որ Սահակ բազ- մի միւսանդամ հայրապե- տական աթոռի վրայ:
ե. Դանիէլ կը յանդի- մանէ զթագաւորը:	ե. Սահակ կը յանդի- մանէ նախարարները:
զ. Տիրապետն չէ կը նմանցնէ:	զ. Սահակ զանոնք տի- րանեղ, տիրապետն եւ մատնիչ կ'անուանէ:
է. Յանձն չ'առնէր ա- ռաջարկը Դանիէլ:	է. Կը հրաժարի Սահակ:
ը. Դանիէլ ըստ Տես- լան կը գուշակէ սղա- զան:	ը. Սահակ կը պատմէ Տեսիլքը:
թ. Թագաւորը, նախա- բարք եւն կը լռեն. կը հիանան:	թ. Նախարարք կը լռեն, կը կը դարձուրին:
ժ. Դանիէլ կը սպանուի ի ծերութեան:	ժ. Սահակ կը վախճանի ի ծերութեան:

Այս համեմատութիւնը կը բառնայ ամէն
կասկած նկատմամբ Գ. խմբադրութեան
յոյսնագրութեան: Այս 10 կէտերը ներկայ

բնագրին հիմնական մասերն են, յատկապէս
անոր կցուած Յոռաջարանին եւ վերջաբա-
նին:

50. Տեսիլքին այս կերպարանքը տալով
ստացած է ժամանակամիջոցներու բաժա-
նումը այսպիսի պատկեր մը.

Ա. Միջոց 400—427 Սահակ՝ կաթողիկոս.
Բ. „ 428—438 Հակոբակաթոս կաթո- ղիկոսը.
Գ. „ 439—453 Յովսէփ կաթողիկոս, Վարդանանք եւ Ղե- ւոնդեանք.
Դ. „ 453—485 Խոստովանողք, Վահա- նեանք:

Ա.—Գ. Միջոցը խտացած են հեռեւեալ
հասուածին մէջ.

«Եւ այլ կարգն եւ միւս եւս կէս կար-
գին, որ երեւեցաւ քեզ գրեալ սքանչելապէս
ոսկի գրով ի ստորին եզեր մագաղաթին:
Ծանիր հաւաստեալ զի մերձ յերեւումն պղծ-
ոյն անապատի դարձեալ յառնէ թագաւոր
յազգէդ Արշակունեաց եւ նորոգի աթոս հայ-
րապետութեան ի շառակեղ սրբոյն Գրիգորի:
Եւ վասն զի ոչ էին արհամարհեալք եւ ըն-
կեցեալք (Արշակունիք եւ Տունն Գրիգորի)
յերկիր ի կոխումն. այլ յայտական երեւմամբ
կայր գունդն եւ ծախեալ պատուականու-
թեամբ ցուցաւ նախորտն: Որ եւս առաւել
հաստատապէս ցուցաւ քեզ եւ ծանոյց գայս
վերին ազդեցութիւնն սքանչելատեսիլ ոսկե-
գիր կարգովն եւ կարգակիտան, որ ի ժամա-
նակս գոռոգացելոյ քշնամոյն արդարու-
թեան նստի²² փահանայապետ արդար, ի
ցեղէ սրբոյն Գրիգորի: Եւ փահանայացեալ
առաջինն կատարէ գաւուրս իւր կրեալ նգնու-
թիւնս բազումս ի սուտ առաքելոց իշխա-
նին կարստեան. եւ վախճանի խաղաղական
հանգստիւ եւ ոչ սրով: Եւ միւս եւս գաւակ
նարին յաջորդեալ գաթոս փահանայապետու-
թեան՝ բազում եւ ազգի ազգի համբերեալ
քերանց եւ գանից, սովոյ եւ հալածանաց եւ
դառն նեղութեան ժամանակս բազումս՝ յա-
նօրէն իշխանին դահնացն սրով ընկալցի
զվնիւ մարտիրոսութեան: Այն զի ցուցաւ քեզ
ի կարգին մասն մի ի գրելոցն կարմրադեղով՝
ստուգեալ հաւատարմութեամբ դաւանեաց
զկատարումն մարտիրոսութեանն, որ դիպե-
լոց է սրբոցն (34—35):

²² Կը սպասուէր հոս «նստցին քահանայապետք
արեւարք»:

Ամբողջ այս ընդգծուած հատուածը Գ. խմբագրէն է: Թոյլ է հոս քերականութիւնը եւ անկապ են նախադասութիւնները: Մեկնիչը նկատի ունի հոս Ս. Սահակը, Ս. Յովսէփին եւ Ղեւոնդեան քահանայը: Նա գրած է Ս. Սահակ «կրած է ճգնութիւնս բազումս ի սուտ առաքելոց իշխանին կորուսեան», այս ինքն Վոսաթ թագաւորի հրամանաւ դահազուրկ եղած է եւ եկած են անոր փոխարէն «սուտ առաքելք», այս ինքն Սուրմակ, Բրքելոյ եւ Շահակ: Այս պարագանցոյց կու տայ թէ խմբագրը կամ նոյն է Ղ. Փարպեցոյ վերագրուած Ա. Գրուազի կարկատիչին հետ եւ կամ կարգացած է այս Գրուազը, ուր առաջին անգամ թխուած է Սահակայ դահազուրկութեան զրոյցը: Ինձ կը թուի թէ այս զրոյցը ծնած եւ զարգացած է Յուսէփեան Տեսիլքի հիման վրայ: Յուսիկ կը տեսնէր ի մասին Ս. Ներսիսի. «Բազում անգամ վասն Տեան լինիցին նոքա ի հեռ եւ ի նախանձ անարժանացն, այլ կացցեն ի հաւատս անշարժ իբրեւ զվէճ եւ յաղթեցցեն նոցա համբերութեամբ բազմաւ: Եւ յետ նոցա թագաւորեացէ ստութիւն յարարասան, յանձնասէր, յարձաթասէր... յանպիտան, ի սուտակ եւ ի բանասրկու մարդկանէ» (§ 47): Տեսիլեան այս տեղիքը մերձեցուած է Ս. Սահակի եւ հնարուած է հակառակաթոռ կաթողիկոսներու՝ Սուրմակի, Բրքելոյի եւ Շահակի զէմքերը: Այս կէտին վրայ ուրիշ տեղ խօսելու առիթը պիտի ունենամ:

Ամբողջ հատուածին բուն յաւելուածը ըլլալը կը տեսնուի նաեւ յաջորդ պարբերութեան: Կ'ըսուի թէ «նստի քահանայապետ արդար ի ցեղէն սրբոյն Գրիգորի. եւ քահանայացեալ առաջինն... եւ միւս եւս զաւակ նորին յաջորդեալ զաթոռ քահանայապետութեանն»: Ի՞նչ աղերսով են հոս «առաջինն» եւ «միւս եւս զաւակ»: Եթէ «նստի քահանայապետ արդար ի ցեղէն Ս. Գրիգորի», այդ քահանայապետը չէր կրնար յանկարծ երկու զէմք զգնուլ՝ ըլլալու համար «առաջին... եւ միւս եւս զաւակ»: Ս. Յովսէփ «ի ցեղէն Ս. Գրիգորի» չէր եւ ոչ ալ «միւս եւս զաւակ» Սահակայ²³: Թերեւս հոս «զաւակ» աշակերտ իմաստով առնուած է. այս զէմքին պիտի սպասուէր, որ յիշուէին նաեւ Գիւտ եւ Յովհաննէս Մանդակունի: Ի՞նչ նպատակ ունէր

²³ Անդրադարձութիւն մը Յուսիկի Տեսիլքին «եւ սահ ծնցի ի քոց զաւակացդ այլ զաւակ» պարբերութեան:

Յովսէփի առնութիւն՝ Ղեւոնդեանց քահանայից նահատակութեան յիշատակութիւնը:

Տեսիլքի բնագրերը, ըստ խորագրին, գրուած էր կարմրադեղով իբրեւ «բան Հօր», եւ Մեկնութիւնը սեւադեղով իբրեւ «բան Հրեշտակին»: Այս դանադանութիւնը գոյններու եթէ հնազոյն օրինակին, ենթադրենք Բ. խմբագրութեան, կը պատկանէր, ընթերցողին թիւրմացութիւն պիտի պատճառէր թէ Տեսիլքին եւ թէ Մեկնութեան մէջ տողերս. «Այն զի ցուցաւ քեզ ի կարգին մասն մի ի գրելոցն կարմրադեղով... զաւանեաց զկատարուն մարտիրոսութեանն»: Նաեւ հոս Գ. խմբագրին ձեռքը կը նշմարուի:

Ինչպէս առ հասարակ մեկնութիւնս բունագրութիւն է, նոյնպէս թոյլ է նախադասութիւնը, թէ հոս, թէ վերագոյն եւ թէ քիչ յետոյ:

51. Մեկնիչը կը դուշակէր թէ «մերձ յերեւումն պղծոյն անապատի դարձեալ յառնէ թագաւոր յազգէդ Արշակունեաց եւ նորոգի աթոռ հայրապետութեան ի շառաւեղէ Ս. Գրիգորի»: Հայրապետը Ս. Սահակ է, որ 386ին բարձրացաւ հայրապետական աթոռի վրայ ըստ ուղիղ ժամանակագրութեան: Այս միջոցին բաժնուած էր Հայաստան. Արշակունի տունը յանձինս Արշակ-Վաղարշակի դադրած. իսկ Սոսրովի իշխանութիւնը չեզոքացուած, ճշգրտոյնս անոր սակաւամեայ դահակալութեանէն ետքը գահը թափուր մնացած: Ուստի հոս «պիղծն Անապատի» Շապուհ Գ. կամ Յազգիւրա Ա. է: Իրօք ալ Յազգիւրաի թագաւորութեան առաջին տարիներուն, իբր 401ին բարձրացաւ արշակունի գահին վրայ Վոսաթ շապուհ, իբր 10ամեայ թափուրութենէ ետքը: Տեսիլքը չի գիտեր Վոսաթ շապուհի մահուան յաջորդած 10ամեայ դատարկութիւնն գահին եւ Արտաշէսի դահակալութիւնն եւ անոր մահէն ետքը արշակունի հարստութեան ի սպաս բարձումը. թէպէտ ծանօթ են անոր Սահակի մահը, Յովսէփի կաթողիկոսի նահատակութիւնը, նաեւ Վարդանանց եւ Վահանեանց նահատակներն եւ խոստովանողները: Այստեղ կը տեսնենք նոր շօշափելի կէտ մ'ալ, Բ. եւ Գ. խմբագրիներու հետքերը զանազաներու համար: Բ. խմբագրի իրեն սահման ընտրած էր մինչեւ Ս. Սահակի աթոռակալութիւնը եւ Վոսաթ շապուհի գահակալութիւնը: Անիկա ոչ Սահակի մահն եւ ոչ ալ Արշակունի տան կործանումը շօշափած է:

52. Հրեշտակը, որ կը մեկնէր Տեսիլքը,

մինչեւ այժմ Տեսիլեան խօսքերը չէր մերձեցուցած Սահակի անձին: Շարունակութեան մէջ, ուր Սահակի թոռներն նկատի կ'առնուին, աւելի բացայայտ են իր խօսքերը, զորոնք Սահակ բառ առ բառ յանձնած է մահազոյնի:

«Եւ որ երեւեցան քեզ բազմութիւն տղայոց շուրջ կալով ի վերայ արծաթի սկտեղն, գուարքացիք ցնծալից ուրախութեամբ. զի ահա յարգանդէ զաւակիդ, որ տուաւ քեզ յԱրարչէն, ելցեն բազում շառաւեղք, արք ընտիրք գորութեամբ. ընդ որս միարանեալ եւ այլ բազմութիւնք լաւ արանց՝ յազգէ նախարարացդ Հայոց. որք գորացեալ սուրբ բանին Աստուծոյ եւ գլխուցմունս բազաւորաց եւ զպատնայիս իշխանաց առ ոչինչ համարեալ՝ միացուցանեն զանձինս ընդ յոյսն բաղալի երկնաւոր կոչմանն՝ չհայեալով ի մեծութիւնս սնտոխս եւ ոչ ի փառս առժամայնս. ընդ որոյ վաճառեալ ումանց զփառս անեղծին Աստուծոյ, ընդ սնտոխի եւ սպականացու կենաց աշխարհիս՝ ուրացոյճ լինին. վասն զի մօտ է առ դուրս վաճառ՝ քուլացելոցն ի կորուստ. եւ հասեալ կայ հուպ օգնութիւն՝ գորացելոցն ի փրկութիւն: Յորս եւ դու հայեցեալ տեսեր շուրջ գաստուածային սեղանովն պարելով գոպայնս, չհայեալով բնաւ ի սայրափմունս սնտոխի հեքանոսական պաշտամանն. յորոց ումանք կատարելութեան հասեալք՝ մարտիրոսական պսակին լինին արժանիք. եւ այլ՝ յարանց բազմաց, եւ ոչ միայն յարանց, այլ եւ ի կանանց, որք քեպէտ եւ ոչ սրով, այլ ի շնորհաց սուրբ Հոգւոյն գորացեալք՝ բազում բարեգործութեամբք կատարին: Որպէս երեւէին քեզ լուսափայլ նշոյլք արձակեալք ի մանկուտոյն. յորոց ումանց կարմրագոյն փայլմամբ երփն երփն էր գոյնն՝ զկատարելոցն արեամբ գուշակէ գնահատակութիւն. եւ զայլոցն պէպէտ անազայքիւք ցուցանէր զշոյլումն՝ որպէս գրագմափայլ գոյնս լուսաւորութեան առաքիլի մարդոց. վասն զի բազում եւ անթիւ են ճգնութիւնք եւ վաստակք արանց արդարոց:

Եւ վասն զի շարժեցաւ սաստիկ դժոխք մամբ արքոն գոր տեսեր. եւ որ երբեմն տղայք քեզ երեւէին, յանունն կատարելութեան բովանդակեալք՝ յերկրէ յերկինս քուցեալ համարձան՝ բովանդակապէս գերկրիս կենցաղս արդարոցն եւ ի յերկինս զլինելոցն ցոյց գիրեշտականման փոխումն եցոյց քեզ

պարգեւատուն բարեաց: Գանգի իբրեւ գոպայս կացին յաշխարհիս արդարքն անմեղութեամբ, չդարձուցանելով ուրեք գիպեցուածս մտաց իրեանց ի գրադմունս նախարարեան, այլ ուշադրեալք ի հրաւիրումն երկնաւոր կոչմանն ուրախութեան հասին:

Գանգի բազում եւ խիստ դժոխքումն յայսմեանէ լինելոց են յաշխարհիս, յարուցումնք քաղաւորաց ի վերայ միմեանց, սովք եւ սասանութիւնք²⁴ եւ բազում նեղութիւնք, որք զգալուստ որդւոյն կորստեան նշանակեն. որ կէկեալ նստիցի՝ ըստ գրեցելումն՝ ի տեղւոյն սրբութեան, ցուցանելով զինքն սաստուած. որ հաշի եւ մաշի ի վերին գորութեան. զոր տէր Յիսուս սատակեացէ հոգւով բերանոյ իւրոյ²⁵» (35—36):

53. Այս գուշակութիւնները կը հային առանց տարակուսի 451—485 տարիներուն, այն է Կարմիր Վարդանի եւ Վահան Մամիկոնեանի մղած կռիւներուն եւ այս առթիւ նահատակուածներու եւ խոստովանողներու: Հրեշտակը կարգացած էր Ղ. Փարպեցոյ Բ. եւ Գ. գրուածները:

Ինձ կը թուի թէ Հրեշտակը նկատի ունէր նաեւ Եղիշէի Հայոց պատերազմի պատմութիւնը, հաւանօրէն իւր Սկզբնագրին մէջ, ուստի եւ գուշակութիւնները մերձեցուած են նաեւ 572—590 տարիներու զէպքերուն: Կան հոս Եղիշէին փոխ առնուած մտքեր եւ բարձր: Այս տեսակէտէ ուշադրաւ են հետեւեալ տեղիքները. կ'ըսուի. «հա յարգանդէ զաւակիդ... ելցեն բազում շառաւեղք, արք ընտիրք գորութեամբ — ընդ որս միարանեալ եւ այլ բազմութիւնք լաւ արանց յազգէ նախարարացդ Հայոց²⁶ — որք... զլարուցմունս թագաւորաց եւ զպատնայիս իշխանաց առ ոչինչ համարեալ՝ միացուցանեն զանձինս ընդ յոյսն բաղձալի երկնաւոր կոչմանն...: Վասն զի մօտ է առ դուրս վաճառ՝ թուլացելոցն ի կորուստ եւ հասեալ կայ հուպ օգնութիւն՝ գորացելոցն ի փրկութիւն»:

Սահակի դատեր արգանդէն պիտի ելլեն

²⁴ Հմմտ. Մատթ., ԻԳ., 7. «Լսելոց էք պատերազմունս... յարեցէ ազգ յազգի վերայ եւ թագաւորութիւն ի թագաւորութեան. եւ եղիցին սովք եւ սրածութիւնք եւ սասանութիւնք ի տեղիս տեղիս»:

²⁵ Հմմտ. Բ. Թեաղ., Բ., 3—8. «Եկեացէ պատմութիւնն եւ յայտնեցի մարգն անօրէնութեան՝ որդին կորստեան, հակառակորդն հայրտացեալ ի վերայ ամենայնի... մինչեւ նստել նմա ի տաճարն Աստուծոյ եւ ցուցանել զանձն թէ սաստուած իցէ... զոր տէր Յիսուս սատակեացէ հոգւով բերանոյ իւրոյ»:

²⁶ Հմմտ. Եղիշէ. «Ի սմին հաւանութեան ամենայն բազմութիւնն միարանեաց» (32). «որք են յազգէն նախարարացն Հայոց» (15):

«բազում շառաւղջ», այն է Մամիկոնեան անէն: Այս «բազում շառաւղջ» Մահակայ թուուունք չեն միայն, այլ եւ թոռունք թուանց. անոնք «զյարուցմունս թաղաւորաց եւ զսպառնալիս իշխանաց» առ ոչինչ պիտի համարին: Այս թաղաւորներէն մին է «որդին կորստեան», որ պիտի ցուցնէ ինքզինքը «աստուած»: Եւ սակայն պիտի «հաշի եւ մաշի ի վերին զօրութենէն»: Այս կորստեան որդին, ըստ Եղիշէի, Սոսրով Ա. Անուշըրուանն է, որ ինքզինքը անմահ կը ներկայացնէր եւ «աստուած» կ'անուանէր: Ինքն է Արեւելից իշխանը, որուն սպանանքները եւ «յարձակումները» արհամարհեցին Վարդան Քաջ եւ իւրայինք: «Յարուցմունք թաղաւորաց ի վերայ միմեանց» կը յիշեցնեն 572—590 տարիներու յոյն-պարսկական 20ամեայ պատերազմներն եւ 590ի Սոսրով Բ. ի եւ Վահրամ Միհրեանդակի ճակատամարտները:

572ի Հայոց ապստամբութենէն ետքն էր, որ Հայ նախարարներն եւ տիկնայք փախան Կ. Պոլիս եւ հոն մնացին աւելի քան 20 տարի: Այս պատերազմներու ընթացքին էր. որ «ոմանք... մարտիրոսական պատկին լինին արժանիք. եւ այլք յարանց բաղմաց... եւ ի կանանց բազում բարեգործութեամբք կատարին»:

Այս ըմբռնմամբ երեք եւ կէս ժամանակամիջոցները կրնանք ընդլայնելով հաշուել Դանիէլի «երեք եւ թնեւորդը եւ կէս մի եւ թնեւորդը» թուերով այսպէս. $70 \times 3 + 35 = 245$ եւ ելակէտ առնելով 348 կը ստանանք 593, երբ Պարսից եւ Յունաց մէջ խաղաղութիւն կնքուեցաւ եւ Սոսրով Բ. թողութեան հրովարտակ տուաւ:

54. Այս հատուածի հետ սերտիւ կապուած է հետեւեալ տեղիքը, որ ըստ իմաստին համազօր է «այլ կարգն եւ միւս եւս կէս կարգին» երեւութին հետ, ուր գուշակութեանց ժամանակը կ'ակնարկուի.

Ձիթենին բարձր ունէր 4 ոստեր, որոնք ի խոնարհ կողմն երկրի ձգտէին, անոնցմէ երեքը միաշափ էին եւ չորրորդը «կիսաշափ ըստ հասարակութեան երիցն»: Առ այս երեւոյթ հետեւեալ մեկնութիւնը կը տրուի. «Լուր եւ ասացից քեզ, զոր ինչ սահմանացն Բարձրեալն. յայսմհետէ մինչեւ ի վախճան աշխարհս՝ երեք տասներեակք ամաց եւ կէս տասներեակք համառուտեցի ի վերայ ամենայն աշխարհի, մինչեւ յերեւումն պղծոյն անապատի, զոր Դանիէլ մարգարէի ասացեալ է

սուրբ Հոգւոյն. եւ լինին սոքա յայտնապէս թուով ամք երեք հարիւր յիսուն՝ ըստ միազդոյք պտղոց երկց ոստոցն եւ կիսոցն» (33):

Դանիէլի Տեսլեան խօսքերը, որ հոս ի վկայութիւն կը կոչուին, են. «Եւ ահա այրն Գարբիէլ... մերձեցաւ առ իս իբրեւ ի ժամ երեկորին պատարապին եւ խեղամուտ արար զիս եւ խօսեցաւ ընդ իս եւ ասէ. Դանիէլ... ամ զմտաւ զբանդ եւ ի միտ առ զանսիրդ. Եւ թանասուն եւ թնեւորդը հալմառուտեցան ի վերայ ժողովրդեան քոյ. եւ ի վերայ քաղաքին սրբոյ... եւ թնեւորդ մի եւ կէս եւ թնեւորդի բարձցին զոհք եւ նուէրք. եւ ի վերայ տաճարին պղծութիւն աւերածոյն կացցէ. եւ մինչեւ ի վախճան ժամանակի կատարած տացի ի վերայ աւերածին» (Դան. Թ. 21—27):

«Եւ թնեւորդ մի եւ կէս եւ թնեւորդի», հոս «երեք տասներեակք ամաց եւ կէս տասներեակք» վերածուած է: Իւրաքանչիւր տասներեակ կը բովանդակէ 100ամեայ շրջան կամ զար մը, ըստ այսմ $3 \times 100 + 50 = 350$: Այս 350 տարիները թէ ո՞ր կէտէն կը սկսին, յայտնի չէ, բայց կը հասնին «մինչեւ յերեւումն պղծոյն անապատի»: Դանիէլ «զՊիղծն Անապատի» չէ անուանած երբեք:

Մեկնիչը «մինչեւ յերեւումն պղծոյն անապատի» բառ առ բառ կրկնած է նաեւ յետոյ. «զի մերձ յերեւումն պղծոյն անապատի». այլուր այդ «պիղծն անապատի» անուանուած է «գոռոզացեալ թշնամի», նաեւ «անօրէն իշխան»: Յետոց քով «պիղծ անապատի» յորջորջմամբ իմացուած է Մահմետ: Դանիէլի յիշեալ տեղիքը Սերիոս մերձեցուցած է Արարացւոց երեւման: Ինչպէս վերագոյն տեսանք Բ. Մեկնիչի համաձայն «պիղծն անապատի» Շապուհ Գ. (383—388) է, որ հայ ժամանակագիրներէն նոյնացուած է Շապուհ Բ. ի Երկայնակեացի հետ: Գ. Մեկնիչը «անօրէն իշխանով» կ'իմանայ Վուամ Ե. Գոռ (420—438), որուն օրով տեղի ունեցաւ Մահակի դահազրկութիւնը:

Նկատմամբ $3\frac{1}{2}$ ի, որ երկիցս երեւան կու պայ, այսպիսի թուաբանական լուծում կը տրուի. «երեք տասներեակք ամաց եւ կէս տասներեակք համառուտեցի... մինչեւ յերեւումն պղծոյն անապատի... եւ լինին սոքա յայտնապէս թուով ամք 350»: Ուստի իւրաքանչիւր տասներեակ հասկցուած է 100, եւ մեկնուած ընդհանուր գումարը $100 \times 3 + 50 = 350$. մինչ ըստ սովորական իմաստին

պիտի ստանայինք $10 \times 3 + 5 = 35$: Այս 35ը կամ 350 կը լեցնէ «յայսմհետէ մինչեւ ի վախճան աշխարհիս» ժամանակամիջոցը: Դժբախտաբար չէ ըսուած թէ որն է «յայսմհետէ» ի սկզբնաւորունը կամ ելակէտը, որպէս զի դանիէլնք աշխարհի վախճանին ուղիղ թուականը, երբ պիտի երեւայ Պիղծն Անապատի:

Ընդունելով Պիղծն Անապատի Շապուհ Գ. եւ վախճան աշխարհիս 385|86 տարին, երբ կ'իշխայ Հայաստանի բաժանումը, եւ հանելով այս տարիէն 35ը, կը ստանանք 350, երբ տեղի կ'ունենայ Դանիէլի մահը (ըստ ընկալեալ ժամանակադրութեան): Այս ժամանակամիջոցը հետաքրքրական է նաեւ անով, որ ճշդիւ 386ին, «մերձ յերեւումն Պիղծոյն Անապատի» կ'ընտրուի Գրիգորի Տնէն Ս. Ներսիսի որդին Ս. Սահակ, որ Տեսլիքին ղիտած դիւանաւոր նպատակակէտն է: Այս մեկնութիւնը ամենայն ճշդութեամբ կը պատշաճի Բ. խմբադրութեան. որ Սահակի ընտրութիւնը գուշակել կը դիտէր:

Բայց կարելի է «երեք տասներեակք ամաց եւ կէս տասներեակք» առնել իբր գուշակական անորոշ միութիւն մը, զոր օրինակ $30 \times 3 + 15$, որով կը ստանանք 105: Ընդունելով 350ը ելակէտ կը հասնինք 455ի, որ թուականն է Ս. Յովսէփի եւ Ղեւոնդեանց քահանայից, նաեւ յընդհանուրն Վարդանանց պատերազմի: Կրկին մեկնութեամբ ալ Մեկնիչին տուած 350 թիւը կ'ընծայէ զարմանալի զուգարիսութեամբ մեր ընտրած ելակէտը, փրկչական թուականի 350 տարին:

Եթէ ուղենք մնալ 350 տարիներու վրայ անխախտ, ելակէտ առնելով դարձեալ 350 տարին, կը ստանանք ճշդիւ 700 թուականը: Հետաքրքրական է այս թուականն ալ: Ինչպէս վերագոյն նկատեցինք, Մահակի Տեսլիքը առաջին անգամ այս թուականէն հետք երեւան կ'ըլլէ: Մատաւորապէս ա'յս տարւոյն գրուած է Diegesis գրուածքը: Ըստ այսմ Տեսլիքի Գ. Մեկնիչը ուղած է այս թուականով մատնանել մեղի Սահակ Գ. կաթողիկոսի (677—703) դահակալութիւնն կամ մահը, եւ աւելի ճիշդ իւր Մեկնութիւնս խմբագրելու տարին: Այս դարուս «պիղծն անապատի» Մահմէտն էր, ընդհանուր ըմբռնմամբ. իսկ մասնական առմամբ Մահմէտ Կորաւարն էր, որ կու գար «Անապատէն», Արաբիայէն, վախճան տալու Հայաստանի, քանզի կործանելու, որուն ընդառաջ կը դիմէր Սահակ Զորափորեցի եւ

կը վաճանէր, ըստ աւանդութեան, ի Սահակի, աղերսագիրը ձեռքին:

55. Գ. խմբագիրը իւր Մեկնութիւնը գրած ժամանակ աչքի առաջ ունեցած է Ղ. Փարպեցւոյ Բ. եւ Գ. Դրուագները, այժմեան ձեւին մէջ: Կը դնեմ համեմատութեան հետեւեալ տեղիքները.

Տեսլիք.	Ղ. Փարպ.
1. Որ երբեմն տղայք թիկ զմացեալ դեռ եւս թիկ երեւէին՝ յաճումն կատարելեան ըրողիս նահատակացն ընդ կեալք յերկրէ յերկինս սրբոյն Վարդանայ... կաթողեցաւ համարձանս նայք... զօգտարեք չեթովանդակապէս զերկրիս զարար. հրահանդս մանկենցաւս արդարոցն եւ ի կանցն հողացեալ ընուին յերկինս զլինելոց նոցա (110, 34—35. հմտ. եւ զհրէտականման փոփոխումն եցոյց թիկ... (36, 6—8):	Իսկ զմացեալ դեռ եւս ի տղայութեան հասակի զարդիս նահատակացն ընդ կեալք յերկրէ յերկինս սրբոյն Վարդանայ... կաթողեցաւ համարձանս նայք... զօգտարեք չեթովանդակապէս զերկրիս զարար. հրահանդս մանկենցաւս արդարոցն եւ ի կանցն հողացեալ ընուին յերկինս զլինելոց նոցա (110, 34—35. հմտ. եւ զհրէտականման փոփոխումն եցոյց թիկ... (36, 6—8):
2. Իբրեւ զտղայս կացին յաշխարհիս արդարքն անմեղութեամբ չդարձուցանելով ուրեք զհայեցուածս մտաց իւրեանց՝ ի զբաղմունս նանրութեան, այլ զհրահանդս զայնցոյցութեան, յայ թեւոյ ի ստէպ. եւ ուշադրեալք ի հրաւիրումն ցածուցին զլեզուս իւրերկնաւոր կոչմանն ուրախանց. յաւելորդ խօսից խութեան հայէին (36, 9—12):	Որում անհարին էր յաղթել կանանց՝ շատխօսութեան եւ ստէպ ստէպ ընդ քօղով այսր անդր մտաց իւրեանց՝ ի զբաղմունս նանրութեան, յայ թեւոյ ի ստէպ. եւ ուշադրեալք ի հրաւիրումն ցածուցին զլեզուս իւրերկնաւոր կոչմանն ուրախանց. յաւելորդ խօսից խութեան հայէին (36, 9—12):

Հետաքրքրական է մասնաւոր հետեւեալ համեմատութիւնը, ուր կը թուի ինձ, թէ երկու եղանակն ալ մէկ ձեռքէ են, եւ այն ա'յն խմբագրէն, որ կցկցողն է Ղ. Փարպեցւոյ Ա. Դրուագին, Տեսլիքին (Գ. խմբագրութեամբ) եւ յանուն Յովհ. Մանդակունւոյ հրատարակախօսութեան:

Տեսլիք.	Ղ. Փարպեցի.
«Եւ յայնժամ կատարեալ պարուք առաքինութեամբ թոնցն արդարքն ի յաւիտեանս արդարքն, եւ ընդ այսպիսի յամենայն ժամ ընդ Տեանն թուով աւուրս պայծառանապէս կատարի առ նոսա ցուցանէ զտացոյցս իւր՝ բանն Տեանն, որ ստէ, թէ զլուստեսիկ եւ զերկնաւոր պատին, զանապականն ուր եսն եմ անդ եւ պաշտօնեայն իմ եղիցի: Եւ եւ զմշտնջենաւոր ընդուղու կնքեա զտեսիլք, որ նել յաջոյ Փրկչին մերոց ցուցաւ թիկ յայտնութիւն եւ Տեանն Յիսուսի Քրիստի բարձանց. քանզի ոչ ի բարձանց. քանզի ոչ ի բարձանց, թիկ յաջոյ օրհնեալք Հօր իմոյ, ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ արքայութիւնն ի սկզբանէ աշխարհի» (էջ 36):	«Արդ եղիցի ձեզ ընդ պարուք առաքինութեամբ թոնցն արդարքն եւ զերկնայն արդարքն, եւ ընդ այսպիսի յամենայն ժամ ընդ Տեանն թուով աւուրս պայծառանապէս կատարի առ նոսա ցուցանէ զտացոյցս իւր՝ բանն Տեանն, որ ստէ, թէ զլուստեսիկ եւ զերկնաւոր պատին, զանապականն ուր եսն եմ անդ եւ պաշտօնեայն իմ եղիցի: Եւ եւ զմշտնջենաւոր ընդուղու կնքեա զտեսիլք, որ նել յաջոյ Փրկչին մերոց ցուցաւ թիկ յայտնութիւն եւ Տեանն Յիսուսի Քրիստի բարձանց. քանզի ոչ ի բարձանց, թիկ յաջոյ օրհնեալք Հօր իմոյ, ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ արքայութիւնն ի սկզբանէ աշխարհի» (էջ 182):

Տեսիլը կը մեկնէ Հրեշտակը. եւ բառ առ բառ կը կատարուի «առանց բան մը վրիպելու»: Երկու հատուածներու մէկէ ձեռքէ բղխած ըլլալը տարակուսի տակ չ'իյնար:

56. Բաց ի Ղ. Փարպեցիէ, խմբագիրը կարգացած է նաեւ Եղիշէի Պատմութիւնը Հայոց պատերազմին: Համեմատութեան եղբներն են.

Տեսիլ (Ղ. Փարպ. 35). Եղիշէ, 76: Ելցեն... արք ընտիրք զորութեամբ. ընդ որս միարանեալ եւ այլ բազմութիւնք լաւ արանց յազդէ նախարարացը Հայոց. որք զօրացեալք սուրբ բանին Աստուծոյ եւ դարուցմունս թագաւորաց եւ զպատանախս իշխանաց արհամարեալ՝ միացուցանեն զանձինս ընդ յոյսն բազմալի երկնաւոր կոչմանն, չհայելով ի մեծութիւնս սնուտիս եւ ոչ ի փոսս առժամայնս.

Թուրացիւցն ի կորուստ: Որոց ոգիքն թուրացեալ են յերկնաւոր առաքինութենէն (13).

Մարտիրոսական պատկին լինին արժանիք. հասեալ կայ հուզ օգնութիւն

Ի հրախրումն երկնաւոր կոչմանն ուրախութեանն հայէին.

Որ հաշի եւ մաշի ի վերին զօրութենէն.

Եղիշէի Պատմութիւնը գրուած է Չ. դարու վերջին քառորդին. ուստի Տեսիլքիս խմբագիրը օգտուած է անկէ առ կանուխ է. դարու մէջ:

57. Գ. խմբագրութեան ժամանակը որոշելու համար կը թուի ինձ թէ կուտան կ'ըն-

ձեռնէ մեզի Տեսիլքի Յառաջարանին հետեւեալ տեղիքը.

«Էի ես ի մեծի հինգշաբաթոյն ի գառլի աղուհացիցն ի հսկման, հաղորդեալ ի ժամ երեկոյնի պաշտաման՝ սրբոյ եւ մեղսաբարիչ խորհրդոյ կեներարին, ցաշակեալ այլ բնաւ աւելի ինչ ոչ՝ բայց հաց եւ ջուր եւ աղ, ըստ կանոնելոյ մեծի եւ սուրբ ժողովոյն երեքհարիւր ութ եւ տասնցն, որք ի Նիկիացոց քաղաքին այսպէս կանոնագրեալ հաստատեցին, զարոց կանոնադրութիւն կնքեալ սուրբ Հոգին սահմանեաց» (28):

Նիկիոյ ժողովը այսպիսի կանոն չէ սահմանած: Յառաջարանին հեղինակը աչքի առած ունեցած է Գանդրայի ժողովոյն Կանոնաց ԻԱ., որ կը հրամայէ. «Եթէ ոք զՔառասներորդան պահեսցէ սուրբ եւ ի գառլի <հինգ> շաբաթի օրն քան զհաղորդել օրինացն եւ բաժակին սրբելոյ, եթէ այլ ինչ աւելի համարձակիցի ուտել, զպահան զոր պահեսցէ ընդունայն. եւ ի մեծ ժողովոյն նշովեալ» (Չեռ. Վիեննայի, Թ. 810, 50ա): Եւ Լաւոզիկիոյ ժողովոյն Կանոնաց ԽԷ. որ կը սահմանէ. «Չէ արժան ի Քառասներորդան յաւազ շաբաթուն հինգշաբթի օր բերան լուծանել, զի մի ամենայն պահք Քառասներորդացն անարդեացին, այլ արժան է զամենայն քառասներորդան պահել եւ լոկ հաշտուջ հացիւ մխրթարել զանձինս» (Թ. 810, 59բ):

Գանդրայի եւ Լաւոզիկիոյ Կանոններու վերագրումը Նիկիոյ ժողովոյն արդիւնքն է հաւանօրէն այն հանդամանքին, որ հին Կառնապոսոց սկիզբը զետեղուած եղած է Նիկիոյ ժողովոյն կանոնները, որմէ առեալ յաջորդ ժողովներու կանոններն ալ Նիկիականը կոչուած են. այսպէս ունինք «Բ. Նիկիականք» կոչուած կանոնախումբը, ուր համառօտուած խմբագրութեամբ համադրուած են բոլոր ժողովներու կանոնները: Այս տեղ Լաւոզիկիոյ ԽԷ. Կանոնը ներկայացուած է այսպէս. «Ոչ է պարտ զքառասներորդ մեծի հինգշաբաթին լուծանել, այլ չորակեր լինել» (Կան. ՃԵ., Թ. 810, թղ. 141բ):

Ասկէ կրնանք հետեւցնել, թէ Յառաջարանին հեղինակը ձեռքի տակ ունեցած է հին Կանոնագիրքը, որ կար հրատարակի վրայ Յովհ. Օձնեցոյ հաւաքածոյէն յառաջ: Վերջնոյ Հաւաքածոյէն մէջ շատ Կանոններ կրած են փոփոխութիւն, ի թիւս որոնց նաեւ յիշեալ կրկին կանոնները. բարբախտարար

ունինք զանոնք հին հեղիակներու քով, աւելի անաղարտ ձեւի մէջ:

Վրթանէս Քերդոյ իւր Պատճառք չորից ժողովոց գրուածքին մէջ (Գիրք թղթոց, էջ 124—125) այսպէս կը գրէ. «Ահիւ եւ տրամութեամբ եւ սրբութեամբ տանել ի գլուխ զսուրբ քառասներորդացն պահս. եւ ոչ վայրասպար յաւուրս պահոցն քարոզել աւետարան եւ մատուցանել պատարագ հրամայեցին, թէ եւ յիշատակ ուրուք, զի պեսցի, բայց ի շաբաթու եւ ի կիրակէի: Եւ սահմանեցին այսպէս. Եթէ ոք կատարեալ հասկալ, առողջ մարմնով քրիստոնեայ անուն ի վերայ եւ գաւառակարեայ պահսն ի գլուխ ոչ տանիցի, նգովեալ լիցի: Եւ եթէ յաւազ շաբաթուն ի հինգշաբաթին աւր քան զհաղորդել սուրբ խորհրդեան՝ բերան ոք լուծցէ, նգովեալ լիցի եւ ամենայն պահք քառասներորդացն բնդուցան լիցին»:

58. Կարեւոր է մեզի համար Գանդրայի ԻԱ. Կանոնը, որուն «քան զհաղորդել սուրբ խորհրդեան» (կամ «օրինացն եւ բաժակին») պարբերութեան միաքը շաբաթօրեալու է Յառաջարանին հեղինակին «հաղորդել ի ժամ երեկոյնի պաշտաման սրբոյ եւ մեղսաբարիչ խորհրդոյ Կենարարին», այս ինքն երեկոյնան հսկման պաշտաման եւ ոչ առաւօտեան պատարագին: Այս տեղ կ'երեւայ թէ հեղինակը կը հետեւի տեսութեան մը, որ պաշտպանուած է Բ. դարու սկիզբը:

Խոսքով վարդապետ, Բ. դարու առաջին քառորդին, այսպէս կը գրէ այս խնդրոյն շուրջը²⁷. «Երանելի առաքեալքն իրբեւ զինքանս համարէին զորս զկնի իւրեանց. չկասկածէին թէ այնչափ խնդիր եւ հակառակութիւն լինի քրիստոնէից վասն պահոց լուծման եւ մանաւանդ վասն մեծի շաբաթուն, որոյ աւուրքն խորհրդական իւրաքանչիւր գատիկ առանց զենման, զի «Չատիկ մեր զենաւ Քրիստոս» (Ա. Կոր. Ե. 7): Իսկ յորմէ փոքր ինչ կասկածէին վասն հին գատիկն եւ նորոյ ուխտիս՝ զհինգշաբաթին աւր արգելին զժողովրդականն ի հաղորդելոյ, զի մի ի պատճառս հաղորդութեան եւ գատիկն անուան ի լուծումն մտաբերիցին պահոցն. յաղագս այսր պատճառի ի մեծի ուրբաթուն յորում պատարագեցաւ զսոնն Աստուծոյ, «որ երարձ գմեղս աշխարհի» (Յովհ. Ա. 29), ոչ մատու-

²⁷ Բան վարդապետութեան յաղագս Քառասներորդացն, առաքեալ տեան Խոսքովայ. Հանդ. Ամս., 1904, էջ 315:

ցանի պատարագ մինչեւ ցկիւրակէին գիշեր. զի թէ վասն շաբաթու եւ կիրակէի այնչափ վիճարանեն, եւ վասն դաշտանան յերուսաղէմ, ս'ըջափ առաւել հակառակէին վասն մեծի աւուր շաբաթանաց փրկչին, զի զմեզ ոչ իշով այլ խաչին փրկեաց: Այլ վասն պահոցն ոչ մատչի պատարագ մինչեւ ի յարութիւնն, յորում լուծանի մեղք եւ անէճք եւ մահ, եւ հաղորդին համարէն հաւատացեալք կենդանարար եւ մեղսաբարիչ խորհրդոյն, որք արժանաւորք զտանին, եւ ապա ցաշակեն ի լուծական կերակուրան»:

Յառաջարանին եւ Խոսքովի տողերուն ներքին աղերսը աչքի կը զարնէ. Յառաջարակարկելով Նիկիոյ ժողովոյն հայրերը կը գրէ. «Չորոց կանոնադրութիւն կնքեալ սուրբ Հոգին սահմանեաց»: Խոսքով յառաջ բերելով Գանդրայի ժողովին Ի. Կանոնը կը գրէ. «զոր Հոգին սուրբ սահմանեաց դաս»: Յառաջար. կ'ըսէ. «ճաշակեալ այլ բնաւ աւելի ինչ ոչ բայց հաց եւ ջուր եւ աղ» = Խոսք. «Քառասուն աւուրց անընդհատ պահք, որպէս կայ ի կանոնս նոցա, անլուծանելի եւ անմերձ յամենայն կերակուրս՝ բաց յաղ եւ ի հաց» (313): Խոսքով աչքի առաջ ունի հոս Սոկրատի Եկեղ. Պատմութիւնը. «Թէ ողոս զպահս քարոզեալս յեկեղեցոյ պնդութեամբ յարդարէր. մանաւանդ քառասներորդս սրբոյ գատիկն եւ զուրբաթ եւ զչորեքշաբաթ անլուծանելի, զոր հացիւ եւ աղիւ եւ ջրով ընդ երեկոյս զպէտս վճարէր» (էջ 619): Յառաջար. «հաղորդեալ... սրբոյ եւ մեղսաբարիչ խորհրդոյ կեներարին²⁸, ցաշակեալ... հաց եւ ջուր եւ աղ» = Խոսք. «հաղորդին համօրէն հաւատացեալք կենդանարար եւ մեղսաբարիչ խորհրդոյն... եւ ապա ցաշակեն ի լուծական կերակուրան»:

Այս տեղիքները կը թելադրեն ընդունիլ, թէ Յառաջարանին հեղինակը թէ չէ Խոսքով, գոնէ անոր ճառին ազդեցութեան տակ կը դանուի: Յամենայն դէպս Խոսքով ծանօթ չէ Տեսիլքիս. այլազգ երբ խիստ պահք պահոցներու՝ Գրիգոր Լուսաւորչի եւ Բարսղի անունները կը յիշէր, պիտի յիշէր անոնց թուին մէջ նաեւ զՍահակ:

Սահակայ Տեսիլքին աղերսը Խոսքով վարդապետի հետ ուշադրաւ է այնու, որ ի շարս հայ պատմագիրներու կը յիշուի «Խոսքով

²⁸ Ղ. Փարպեցի պիտի արտայայտուէր. «հաղորդեալ... ի պատուական խորհրդոյն մարմնոյ եւ արեան» (էջ 71):

ևս թարգմանիչ, որ է պատմութիւն սրբոյն Սահակայ հայրապետին» (Էջմ., Թ. 2271, Թղ. 218ա, յամէ 1724. նոյնը հրատ. Ազգարար, Մազրաս, 1795, էջ 188 = Գալէմքեարեան, Պատմ. հայ լրագրութեան, էջ 206) : Սորով պատմիչն կը յիշէ նաեւ Կիրակոս Գանձակեցի, էջ 3, 16 : Սորովի՞ գործն է այն, որ կը յիշուի Սովերբ Հայկականը, Բ., 37 իբր «Կատարեալ պատմութիւն Սահակայ եւ Մեսրոպայ» (հմտ. առ այս Նորայր Բիւզանդացի, Կորին վարդապետ, էջ 10, ծան.) : Ինձ կը թուի թէ Սորով թարգմանիչն նոյն է Սորով վարդապետի կամ «քահանայի» հետ, որ եւ կոչուած է Սորովիկ թարգմանիչ, եւ ծագած Բ. դարու առաջին քառորդին, եւ իրեն վերագրուած «Պատմութիւն սրբոյն Սահակայ հայրապետին» ոչ այլ ինչ է, բայց եթէ Ղ. Փարպեցոյ վերագրուած Ա. Դրուագը : Այս մասին սխալ խօսիմ ընդարձակ այլուր :

Հ. Ն. ԱԿԻՆՅԱՆ



ՔՐԻՍՏՈՆԵՒՈՒԹԵԱՆ ՄՈՒՏՎԵՐ ՎՐԱՍՏԵՆՈՒՄ

Մծխէթի հրէական գաղութը : Ս. Գրիգոր Լուսաւորիչ եւ Սրբուհի Նունէ (Նինօ) Վրաստանի առաքելուհին : Չալէնցի Յովհաննէս Եպիսկոպոսի եւ իր ընկերների գործունէութիւնը Վրաստանում, Զ. դարում : Քրիստոսի Անկապ պատմաւանի աւանդութիւնը Վրաստանում, Բիւզանդիայում եւ Գաղղիայում :

Ինչպէս բոլոր արեւելեան եկեղեցիները, Վրաց Եկեղեցին եւս իր հիմնարկումը վերագրում է Քրիստոսի առաքելներից մէկին : Վրաց Տարեգրքն այս մասին նոյն խոսքն աւելի յառաջ է գնում : Նրա պատմածին նայելով, Քրիստոսի համբարձումից յետոյ երբ առաքելները վիճակ են գցում որոշելու համար թէ ո՞վ ո՞ւր պիտի գնայ քարոզելու, Վրաստանը լուսաւորելու վիճակն ընկնում է նոյն ինքն Մարիամ Աստուածածինին : Սակայն Աստուածամայրը հրաժարում է այս ճանապարհորդութիւնից եւ իր կողմից նոյն պաշտօնը յանձնում է Անդրէաս առաքելին :

Չուզելով այնու ամենայնիւ բոլորովին զրկել Վրաստանը՝ Աստուածածինն որոշել է իր սրտակերն ուղարկել... : Այս է պատճառն, առում է աւանդութիւնը, որ այնչափ շատ տաճարներ են կանգնուած Վրաստանում Աստուածամօր անուան : Իսկ Անդրէաս առաքելին իրօք եկե՞լ է Վրաստան թէ ոչ՝ աւանդութիւնն այդ մասին լուծում է կամ որոշ բան չէ առում : Միայն թէ նրա անունը եւ նրա հետ միասին Սիմէոն կանանացու անունը հին դարերում յարգուած է եղել Վրաստանում : Յատկապէս Սիմ. կանանացուն նուիրուած վանքեր էլ են հիմնուել :

Վրաց Տարեգրքում քրիստոնէութեան մուտքի եւ տարածման պատմութիւնը քաղուած է «Վրաստանի Դարձը» (վրացերէն «Քարթլիս Մոքցէվա») կոչուած վրացական գրչագրից, իսկ այս վերջինի աղբիւրներն են եղած՝ անկասկած Ագաթանգեղոսն եւ Մ. Սորենացու Հայոց Պատմութիւնը, Ժամանակի եւ պարագաների համաձայն կատարուած փոփոխութիւններով, վրացական գրոյցներից առաջնորդուելով :

«Վրաստանի Դարձը» կոչուած պատմութեան երկու մասից է բաղկացած : Ա. մասը հրատարակուել է 1890ին, իսկ երկրորդ մասն, որ «Ս. Նինոյի կեանքը» վերնագրին է կրում, հրատարակեց ծանօթ վրացի գիտնականն Եփրեմ Թաղայշվիլի, ուսուցիչ թարգմանութեամբ միասին, կցելով բազմաթիւ հմտալից տեղեկութիւններ : Յետոյ կատարուեցան նաեւ անգլիերէն եւ գերմաներէն թարգմանութիւններ : Այս հետաքրքրական վրացերէն գրչագիրը գտնուած է Ծատերիզի (Տայքում) նախ հայկական եւ ապա վրացականի վերածուած նշանաւոր վանքի ձեռագիրներին ժողովածոյի մէջ : Վրացի հնագէտ Բաքրաձէ ենթադրում է թէ Սորենացին՝ Ս. Նինոյի կամ ըստ Հայոց Նունէի առաքելութեան վերաբերեալ իր պատմածը քաղած է այս գրչագրից :

«Ս. Նինոյի կեանքը», ինչպէս առհասարակ բոլոր այդ օրինակ հին «սրբոց վարքերը» պարունակում են մեծ թուով գրոյցներ, որոնք ընդհանրապէս կրօնական ջերմեռանդութեամբ ոգեւորուած գրողների երեւակայութեան ծնունդ են. բայց պատահում են այնտեղ նաեւ կեանքի իրական գծեր եւ պատմական զէպեր : Ահա ինչպէս է նկարագրուած Վրաստանում քրիստոնէութեան

մուտքը այդ՝ «Վրաստանի Դարձը» ընդհանուր անունը կրող գրչագրում :

Կապաղաղովկեացի Չարոզոն անունով մէկը, յանուն Քրիստոսի իր թշնամիներին յաղթելուց յետոյ, ուխտի է գնում Երուսաղէմ եւ այնտեղ ամուսնանում է Սուսան կամ Շուշան անունով մի աղջկան հետ : Այս ամուսնութիւնից ծնունդ է կլաստատա քաղաքում Նինօ, Վրաստանի ապագայ Լուսաւորիչը : Երբ Նինօ տասներկու տարեկան է դառնում, հայրը նրան Աստուծոյ է նուիրում, որպէս զի նա մշտական կոյս մնայ, իսկ ինքը աշխարհից քաշուելով ճգնաւոր է դառնում : Նինօ (կամ Նունէ ըստ Հայոց) մինակ մնալով գալիս է Հայաստան եւ Դուին քաղաքում մի հայի քով աղանդութիւն է անում եւ այնտեղ հայերէն է սովորում : Լսելով Հայաստանում իրեն նման ուրիշ օտար կոյսերի գոյութիւնը, նա գտնում է նրանց եւ ընկերանում է Ս. Հովհաննէին : Երբ Տրդատի հրամանով Հովհաննէին եւ միւս կոյսերին նահատակում են, Նունէ թաղուում է «վարդնու տակ», եւ այնտեղից մտիկ է տալիս թէ ինչպէս «նահատակեալ հոգիներն երկինք են համբառնում» : Երբ նա այս կերպով աղաւտում է մահից, երկնային տեսիլքը նրան հրամայում է «գնալ ի կողմն հիւսիսի, ուր հունձք բազումք են եւ մշակ ոչ գոյ» : Եւ որպէս զի կոյսը չսխալի, տեսիլքը նրան գրաւոր պատուէր է թողնում «հոռմայեցերէն լեզուով» գրուած¹ : Նինօ հնազանդում է եւ այս գրաւոր հրահանգից առաջնորդուելով գնում է դէպի հիւսիս եւ գալիս է սահմանակից նահանգն, որ Մէսիէթին կամ Վիրահայքն էր : Այնտեղ նա պատահում է հովիւներէ, որոնց հետ հայերէն է խօսում : Հովիւները ցոյց են տալիս թէ ի՞նչ ճանապարհով պէտք է գնայ, եւ նա շարունակելով գալիս է Մծխէթա, Վրաստանի մայրաքաղաքը : Մծխէթում նա ապաստանարան է գտնում թագաւորի պարտիզպանի կնոջ, Անաստասիայի քով : Ամբողջ 3 տարի նա մնում է այս հիւրընկալ կնոջ մօտ : Մծխէթում նա յարաբերութեան մէջ է մտնում տեղւոյն հրեայ գաղութի հետ եւ մտերմանում է նրա քահանայի հետ : «Վրաստանի Դարձը» ընդհանուր անունը կրող գրչագրում :

նայ Արիաթարի ու կնոջը (կամ աղջկան) Սիդոնեայի հետ : Այս Արիաթարը՝ կարգացած լինելով Քրիստոսի գալստեան վերաբերեալ մարգարէութիւնները՝ դառնում է Վրաստանի առաջին հաւատացեալը² :

Նունէ՝ Արիաթարի ընկերութեամբ քաջալերուած, դուրս է գալիս իր թագստեան տեղից եւ սկսում է իր քարոզութիւնը : Նրա նորածեւ քարոզներն եւ կատարած հրաշքները տարածում են իր համբաւը : Այդ Ժամանակ Վրաց թագուհին, որ ըստ Վրաց Տարեգրքի, Հայոց Տրդատ թագաւորի աղջիկն է եղել, բնաւ տեղեկութիւն չէ ունեցել թէ ի՞նչ մեծ փորձանք է անցել իր հօր գլխից եւ ի՞նչ մեծ կրօնական յեղափոխութիւն է կատարուել իր հայրենի երկրում : Լսելով Նունէի համբաւը, ինքն էլ արդէն տկար, կանչում է նրան եւ ուղում է նրանից լսել բոլոր մանրամասնութիւնները : Նունէ մի առ մի պատմում է Հայաստանում կատարուածն իբրեւ ականատես, որից թագուհին մեծապէս ազդուում է եւ խնդրում է, որ իրան եւս բժշկէ : Նունէի սղօթքի շնորհիւ թագուհին եւս բժշկուում է : «Եւ տարեալ գնա (թագուհին), գրում է Չունչէր, ի մահիճան Նունեայ եւ նորա աղօթեալ յերկար՝ եզ զխաչն ի վերայ նորա չորեքեւտի եւ նա (թագուհին) նոյնժամայն նստաւ ողջացեալ» : Այս բժշկութիւնից վերջը Տրդատի աղջիկը հաւատում է Քրիստոսին եւ այնուհետեւ ամէն կերպ պաշտպան է հանդիսանում Նունէին : Իսկ թագաւորի դարձն ըստ նոյն գրոյցին՝ տեղի է ունեցել հետեւեալ պարագաներում, որ մասամբ յիշեցնում է Հայոց արքայ Տրդատի գլխին եկած «փորձանքը» : Միւրեան (ըստ Հայոց Միհրան) թագաւորը գնում է որսի. յանկարծ կէսօր Ժամանակ այնպիսի խիտ մառախուղ է տիրում, որ արեգակը բոլորովին խաւարում է : Սարսափը տիրում է որսորդներին. թագաւորի

² Մծխէթի այս հրեական գաղութը հաստատուել էր այնտեղ Քրիստոսից դարեր յառաջ եւ անընդհատ յարաբերութեան մէջ էր Պաղեստինի եւ Ասորիքի իր ազգակիցների հետ : Քրիստոսի ծնունդը գաղութն իմացել է հետեւեալ կերպով. «Մծխէթում լուր տարածուեց թէ պարսիկները տիրել են Երուսաղէմին, եւ ամբողջ հրեական գաղութը վատով համակուեց : Բարեխառար հետեւեալ տարին նոր լուր հասաւ թէ պարսիկներ չեն տիրել քաղաքին այլ մոգեր ընծայ են թերի մի նորածին մանուկի : Երեսուն տարի վերջը Աննա քահանայապետից պատգամաւոր եկաւ Մծխէթա, որ սասց հրեայ գաղութին՝ նա, որին մողերն ընծայ էին բերել, մեծացել է եւ ինքն իրեն Աստուծոյ Որդի յայտարարելով նոր կրօն է քարոզում, ուստի Քահանայապետը յորդորում է, որ Մովսիսականութեան հմուտ բոլոր հրեաները Երուսաղէմ հաւաքուին իրենց դասնութիւնը պաշտպանելու» :